«Արդ, եթէ մահկանացու հրամանատարին համար այդ քաջութիւնները կը գործէինք, որքան աւելի եւս պէտք է ընենք մեր անմահ թագաւորին համար, որ տէրն է ողջերուն ու մեռելներուն եւ որ պիտի դատէ մարդիկ իրենց գործերուն համեմատ։ Զէ՞ որ եթէ նոյնիսկ երկար ապրինք ու ծերանանք, կրկին պիտի բաժնուինք այս մարմինէն, որպէսզի միանանք կենդանի Աստուծոյն, Որմէ այլեւս պիտի չբաժնուինք։

«Ուրեմն կ'աղաչեմ ձեզի, ո՛վ իմ քաջ նիզակակիցներս, մանաւանդ որ ձեզմէ չատեր քաջութեամբ կը գերազանցեն զիս ու հայրենական գահի պատիւով ալ ինձմէ բարձր են։ Բայց քանի որ ձեր կամքով ու յօժարութեամբ առաջնորդ ու զօրագլուխ կարգեցիք զիս ձեզ, թող իմ խօսքերս հեչտ ու հաճելի թուին ձեզի, մեծերուդ ու փոքրերուդ հաւասարապէս։ Երբեք չվախնանք հեթանոսներու բազմութենէն, եւ մահկանացու մարդուն սուրին թիկունք չդարձնենք, վասն զի եթէ Աստուած յաղթութիւն տայ մեզի, կը չախչախենք անոնց զօրութիւնը, որ ճչմարտութեան կողմը վեր բարձրանայ։ Իսկ եթէ հասած է ժամանակը մեր կեանքի վախճանին, այս պատերազմին մէջ սուրբ մահով, սրտագին խնդութեամբ ընդունինք զայն, միայն թէ մեր քաջութեան հետ վատութիւն չխառնենք։



«Մանաւանդ ես երբեք չեմ մոռնար ու միշտ կը յիշեմ իմ եւ ձեզմէ ոմանց արարքը այն ժամանակ, երբ անօրէն իշխանը խաբեցինք ու մոլորեցուցինք անպիտան մանկան մը նման, երեսանց անոր ամբարիշտ կամքը կատարելով. բայց Տէրը ինք վկայ է թէ ներքնապէս որքան սերտ կապուած էինք իրեն։

«Դուք ալ գիտէք, որ մեր սիրելիներուն համար, որոնք մեծ նեղութեան մէջ էին, ամէն տեսակ հնարք կը փնտռէինք, որ ազատենք զանոնք ու անոնց հետ միասին պատերազմէինք անօրէն իշխանին դէմ, մեր հայրենի աստուածատուր օրէնքներուն համար։ Եւ երբ չկրցանք օգնել անոնց, անհնար պիտի ըլլայ մեզ, մարմնաւոր սիրոյ համար Աստուած մարդոց հետ փոխանակել։

«Իսկ հիմա Տէրը ինք երկու–երեք կռիւներու մէջ զօրութեամբ օգնեց մեզի, այնպէս որ քաջութեան համբաւ ժառանգեցինք, թագաւորին զօրքը չարաչար կոտորեցինք, մոգերը անողորմ ջարդեցինք, չատ մը տեղերէ կռապաշտութեան պղծութիւնը սրբեցինք, թագաւորին անօրէն հրամանը անարգեցինք ու ոտնակոխ ըրինք, ծովուն խոռվութիւնը իջեցուցինք։ Լեռնացած ալիքները դաշտացան, բարձրադէզ փրփուրը հատաւ, գազանացած կատաղութիւնը դադրեցաւ։ Այն որ ամպերուն վրայ կ'որոտար, սովորական մարդէ մը աւելի ստորնացաւ ու սկսաւ մեզի հետ խօսիլ։ Այն որ բերանացի հրամանով կ'ուզէր չարութիւն հասցնել Սուրբ Եկեղեցւոյն, այժմ աղեղով, նիզակով

ու սուրով կը կռուի: Այն որ կը կարծէր թէ մենք քրիստոնէութիւնը հանդերձի նման հագած ենք մեր վրայ, այժմ հասկացաւ, թէ չի կրնար փոխել զայն, ինչպէս գոյնը մարմնէն, ու երբեք ալ պիտի չկարենայ փոխել մինչեւ աշխարհի կոտորածը: Վասն զի անոր հիմերը հաստատ դրուած են անշարժ վէմի վրայ, ոչ թէ հոս երկրի վրայ, այլ վերը երկինքի մէջ, ուր ոչ անձրեւ կ'իջնէ, ոչ հով կը փչէ ու ոչ ալ հեղեղներ կը կազմուին: Եւ մենք թէպէտեւ մարմնով երկրի վրայ ենք, սակայն հաւատքով երկինքի մէջ չինուած ենք, ուր ոչ ոք կրնայ հասնիլ Քրիստոսի անձեռագործ չինուածքին:

«Հաստատ կեցէք մեր վստահելի զօրագլուխի մասին, որ երբեք պիտի չմոռնայ ձեր քաջագործութիւնները: Ով քաջեր, մեզ համար մեծ չնորհ է այս, որ Աստուած կատարեց մեր բնութեան միջոցաւ եւ ուր Աստուծոյ գոյութիւնը ի յայտ կուգայ մեծապէս: Քանզի եթէ աստուածային օրէնքներուն անունով ուրիշները կոտորելով անձնական համբաւ ժառանգեցինք ու մեր ազգատոհմին համար քաջ անուն թողուցինք եկեղեցիին, Տիրոջմէն ակնկալելով վարձատրութիւնը, որ պահուած է ամէն մէկուս համար, իր սրտին յօժարութեան ու կատարած գործերուն համեմատ, հապա որքան աւելի մեծ պիտի ըլլայ եթէ մենք մեռնինք մեր Տէր Յիսուս Քրիստոսի մեծ վկայութեան համար, որուն երկնաւոր Հրեշտակներն անգամ կը ցանկան, եթէ կարելի ըլլար: Եւ որովհետեւ այս պարգեւները ամենուն չեն պատչաճիր, այլ անոնց միայն, որոնց համար Բարերար Տէրը ինքը կը պատրաստէ, այս պատեհութիւնը կը չնորհուի մեզ, ոչ թէ մեր արդար գործերուն համար, այլ աննախանձ պարգեւատուէն, համաձայն Սուրբ Կտակարանի այն խօսքին, թէ Ուր որ մեղքը աւելցաւ, հոն աւելի շատցաւ Աստուծոյ շնորհքը:

«Ու այս խօսքը չատ կը պատչաճի մեզի· ինչպէս որ մարդոց առջեւ չափազանց ամբարիչտ երեւցանք, կրկնապատիկ արդարացած պիտի երեւինք մարդոց, հրեշտակներուն եւ ամենուն Հօր առջեւ: Վասն զի այն օրը երբ մարդիկ լսեցին մեր ամբարիչտ արարքը, չատ արցունք թափուեցաւ Սուրբ Եկեղեցւոյն մէջ, մասնաւորապէս մեր սիրելիներուն կողմէն: Մեր ընկերներն անգամ զայրացած՝ սուրով կը սպառնային մեզի եւ կ'ուզէին դառն մահով պատժել մեզ: Մեր ծառաները զզուանքով կը փախչէին մեզմէ: Հեռաւոր մարդիկ որոնք լսած էին մեր քրիստոնէութեան համբաւը, տեղեակ չըլլալով մեր ներքին մտադրութիւններուն, ողբ ու կոծով անդադար կը սգային մեր վրայ եւ անգիտութեամբ անհամար հայհոյութիւններ կ'ընէին մեզի: Եւ դեռ աւելի կարեւորը ըսեմ ձեզի, ոչ թէ միայն մարդիկ երկրի վրայ, այլ հրեշտակները երկինքի մէջ, երեսնին կը դարձնէին մեզմէ, որպէսզի տխուր դէմքով չնային մեզի:

«Ու ահա եկաւ հասաւ ժամանակը, որ մենք մեր վրայէն մաքրենք ամէն արատ: Այն ժամանակ հոգիով ու մարմնով տրտմած էինք վչտահար սգաւորի մը նման, այսօր երկուքին մէջ ալ զգաստացած ու զուարթացած, առհասարակ լրջացած ենք, վասնզի, բարերար Տէրը կը տեսնենք մեզի առաջնորդ: Մեր Զօրավարը հասարակ մարդ չէ, այլ բոլոր մարտիրոսներուն զօրագլուխը: Վախը թերահաւատութեան նշան է: Մենք թերահաւատութիւնը վաղուց վտարած ենք մեր մէջէն, թող երկիւղն ալ փախչի՛ մեր մտքէն ու մեր խորհուրդներէն»:

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

440?-510

ՇՆՈՐՀՔ ԱՐՔ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ



Մեր պատմութեան որքան հերոսական ու յանդուգն՝ նոյնքան ալ խոհական եւ իմաստուն դէմքերէն է Վահան Մամիկոնեան, որ Վարդանանց սկսած կրօնական ու ազատագրական չարժումը իր յաջող վերջաւորութեան բերաւ: Երկայն է Վահանին պատմութիւնը: Ղազար Փարպեցի իր գրքին գրեթէ կէսը յատկացուցած է ներկայացընելու անոր գործունէութիւնը. մենք պիտի աշխատինք համառօտել զայն:

Վահան որդին է Հմայեակ Մամիկոնեանի, որ եղբայրն էր Աւարայրի հերոս Վարդանի: Աւարայրի պատերազմէն առաջ ղրկուած էր ան Բիւզանդիոն, ի գլուխ պատգամաւորութեան մը, Քրիստոնեայ կայսեր օգնութիւնը ուզելու հայոց մտադրած անհաւասար պայքարին համար ընդդէմ կրակապաշտ Պարսից: Կայսրը իր հասնելէն քիչ վերջ մեռած էր. յաջորդը –Մարկիանոս– չէր ուզած օգնել Հայոց: Ձեռնունայն վերադարձած էր Հմայեակ, երբ Աւարայրի ճակատամարտը վերջացած իր եղբայրը նահատակուած, եւ պարսիկներ տիրապետած էին Հայաստանին: Ինքն ալ կ'ամրանայ երկրին հիւսի–արեւմտեան սահմանները, ուր պարսից ազդեցութիւնը դեռ չէր տարածուած: Տակաւ առ տակաւ իր չուրջը հաւաքուած էին պատերազմէն նահանջողները: Այս լսելով Պարսիկ մարզպանը երկու գունդեր ղրկեց այն կողմ. Հմայեակ ալ ինկաւ այս մարտին մէջ, նահատակելից դառնալով իր եղբօր Վարդանին:

Հմայեակ իր ետին ձգած էր իր այրին, Զուիկ Տիկինը, որ ճարտար եւ ուսեալ կին մըն էր, եւ ունէր չորս մանչ կորիւններ, որոնց անդրանիկն էր Վահան եւ միւսներն էին Վասակ, Արտաչէս եւ Վարդ: Պատերազմէն յետոյ երբ Հայ նախարարները դատելու համար Տիզբոն կանչուեցան, ասոնց հետ ղրկուեցան նաեւ քանի մը նախարարազուն տղաքներ, Վասակ Սիւնիի ղրդումով, յատկապէս Վարդանի հետ կապ ունեցողները, «որպէսզի մեռնին»: Ասոնց մէջ էին վերոյիշեալ Վարդանի եղբօրորդիները, ինչպէս նաեւ թոռները, այսինքն երկու որդիները Արշաւիր կամսարականի, որ ամուսնացած էր Վարդանի Վարդանոյշ աղջկան հետ:

Զուիկ Տիկինը ամուսինին մահէն յետոյ փոխադրուեցաւ Վրաստանի Աչուչա Բդեշխին քով, որ ամուսնացած էր իր քրոջ Անուշվառամին հետ, եւ թախանձագին խնդրեց որ մի կերպ ազատէ իր զաւակները եւ Վարդանի թոռները Պարսկաստանի պատանդութենէն: Այս գործը յաջողեցաւ 3–4 տարիներ յետոյ 455–ին, երբ Աչուչա Բդեշխ «բազում եւ անհամար ծախքով», կրցաւ ազատել այս տղաքները եւ իր մօտ բերել: Ասոնք ուրեմն մեծցան ու դաստիարակուեցան Վրաց արքունիքին մէջ Զուիկ Տիկնոջ ձեռքին տակ: Ասոնց հետ է նաեւ ապագայ կարեւոր պատմիչ Ղազար Փարպեցի, որ մեծ գովութեամբ կը յիշատակէ Զուիկը իբրեւ «անուանի կին, օժտուած ամէն տեսակ լաւ եւ մտաւոր չնորհներով»: Փարպեցի, որպէս ականատես կը ներկայացնէ այս տղաքներուն բացառիկ չնորհները: «Լաւագոյն էին գրեթէ ամէն մարզի մէջ, աչքառու՝ մտացիութեամբ եւ իմաստութեամբ. ճարտար՝ նպատակին զարնող նետաձգութեան մէջ. թեթեւաշարժ՝ որսորդութեան մէջ. ուղիղ եւ չնորհալի պատանիներ եւ երիտասարդներ» (Փար. 381): Յատկապէս կը ծանրանայ Փարպեցի Վահանի վրայ, իբրեւ «մտացի մարդ մը, ողջամիտ եւ բարեսէր. ինչ գործի որ ձեռնարկէր Տէրը յաջողութեամբ կը պսակէր զայն. եւ օր ըստ օրէ կը զօրանար, մինչեւ իսկ պարսիկներ, հակառակ իրենց կամքին, կը սիրէին զայն ու կը պատուէին. որոնք պարսից թագաւորի առջեւ կը գովէին Վահանի լաւութիւնը». ինչ որ նախանձը կը գրգռէր ուրացող նախարարներուն, որոնք առիթը չէին փախցներ Վահանը զրպարտելու Պարսից արքունիքին մօտ թէ «անհնար է, որ սա առանց ապստամբութեամբ մնայ հայոց մէջ»:

Վահան տեսնելով որ այս զրպարտութիւնները կանգ պիտի չառնեն եւ ի վերջոյ պիտի յանգէին զինք մէջտեղէն վերցնելու, ինք դիմեց կտրուկ եւ արմատական միջոցի այդ զրպարտութիւնները մէջտեղէն վերցնելու: Ի սէր ապագայ իր ծրագիրներուն, եւ սրտին վրայ քար դնելով «գնաց Պարսից արքունիքը եւ հաւատքին մէջ տկարացաւ», կ'ըսէ իր բարեկամ պատմիչը· այսինքն ուրացաւ իր հաւատքը, որպէսզի միւս ուրացողներ դադրին զինք բամբասելէ: Օգուտ չունեցաւ: Նախանձը եւ բամբասանքը չարունակուեցան: Պարսից արքունիքը կ'երեւի վարձատրելու համար Վահանի ուրացումը զինք Հայաստանի պետական տուրքին հաւաքիչ նշանակած է: Իր գործակիցներէն մէկը, Վրիւ Ասորին, Պարսկաստան երթալով ամբաստանեց Վահանը, թէ «հաւաքած ոսկիները իր մօտ կը պահէ եւ կը խորհի երթալ Ցունաց կայսրին կամ Հռնաց աչխարհը եւ այդ ոսկիներով կ'ուզէ գունդ կազմել եւ ապստանբիլ»:

Այս չատ վտանգաւոր ամբաստանութեան ալ առաջքն առնելու համար «իմաստախորհ» Վահան, իր մօտ եղած ոսկին առած Պարսկաստանի արքունիքը փութաց: Ոսկիին փայլը եւ տեսքը ուրախացուց պարսից թագաւորը· իսկ Վահանի չատ իմաստում եւ կշռուած խօսքերը, թէ «Ի՞նչպէս կրնայի ապստամբութեան մասին մտածել երբ Պարսից ոյժը չտեսնելու չափ կոյր չեմ, զիս ամբաստանողն ալ գիտէ, թէ ծառայ մը անգամ չունիմ ինծի կերակուր եփելու, ոչ ալ՝ երկու կամ երեք պատանիներ ձեռքիս տակ, որ ինծի սպասաւորեն: Ցետոյ, եթէ արդարեւ օտար երկիր փախչելու միտք ունենայի այսքան ոսկին կը բերէի՞ ձեզի...»: Այս եւ նման խելացի խօսքեր համոզեցին պարսից թագաւորը եւ աւագանին, որոնք իրաւունք տուին Վահանին խօսքերուն քան ամբաստանութեանց Վրիւին որ «արհամարհուած հեռացաւ ատեանէն· եւ Վահան վերադարձաւ Արքունիքէն մեծարանքով եւ մեծ չքեղութեամբ»:

Հակառակ ասոր սակայն Վահանի խիղճը կը տանջէր զինքը իր ուրացութեան համար, «զոր նման նահատակեալ հայրերուն –Վարդանանց– երեսանց էր եւ ոչ ճըշմարտութեամբ»: Սակայն կը խորհէր որ «մի գուցէ աչխարհիս փառքերէն տարուելով, եւ ուշացնելով իր դարձը մոռնայ հանդերձեալ աչխարհի երկիւղը եւ իսպառ կորսուի»: Ուստի անդադար կը խնդրէր Քրիստոս Փրկիչէն, որպէսզի չնորհէ իրեն պատեհ ժամանակ մը դարձի գալու ու կ'աղօթէր· «Քեզի համար, Տէր Աստուած, ամէն ինչ հնարաւոր է, դուն ես իմ ապաւէնս, չնորհէ ինծի խոստովանութեան եւ դարձի ժամանակ· սորվեցուր ինծի որ կամքդ կատարեմ, որովհետեւ դուն ես իմ Աստուածս»:

Արդարեւ այդ ժամանակը չնորհուեցաւ իրեն: Վրացիք ապստամբեցան պարսիկներու դէմ: Ասիկա յոյս ներչնչեց Հայերուն, յատկապէս Աղուանից երկրին մէջ գտնուող հայկական բանակին, որ մօտէն կը հետեւէր Վրաց չարժումներուն: Այնպէս պատահեցաւ որ այս բանակը ետ Հայաստան կանչուեցաւ: Իրենց հայրենի հողին վրայ գտնուիլը աւելի ոյժ տուաւ «Քրիստոնեաներուն», որոնք կը հակադրուէին ուրացողներուն: Ասոնք իրենց մէջ գաղտնի ժողով ըրին եւ որոչեցին հետեւիլ Վրաց օրինակին: Այս նպատակով գիչեր մը իրենց միտքը յայտնեցին Վահանի որ ըսաւ· «Ձեզմէ ոմանք գիտեն թէ որքան ահաւոր կերպով կը տագնապիմ «ուրացողի» սուտ անունին համար, զոր ատելութեամբ կը կրեմ· հակառակ այս կացութենէն ազատուիլ ուզելուս չեմ կրնար ձեզի հետ միանալ չատ մը պատճառներով» –զորս կը թուէ մի առ մի– որոնցմէ մեծագոյնը սակայն այն է, որ դուք «ձեր անձերէն պէտք է վախնաք, վասնզի սուտ –կեղծ– եւ անվստահելի մարդիկ էք»:



Սակայն ներկաները վիրաւորուած ըսին· «Մեր յոյսը ոչ Հոռոմին ոչ ալ Հռնաց վրայ է· այլ նախ Աստուծոյ ողորմութեան վրայ է, բարեխօսութեամբ Սուրբ Գրիգորի... եւ ապա մահը աչք առնելու մեր յանձնառութեան վրայ է· որովհետեւ աւելի լաւ է մեզի համար մէկ ժամէն մեռնիլ քան թէ ամէն օր տեսնել, որ եկեղեցին եւ Քրիստոնեաները կ'արհամարհուին եւ կը քակուին»:

Վահան համոզում գոյացնելով որ այս մարդիկ անկեղծ են իրենց որոշումին մէջ, Աւետարան բերել տուաւ, ամենքին երդում ընել տալով ցրուեցան: Ժողովի ներկաներէն մին նոյն գիշերն իսկ Հայոց միաբանութիւնը եւ որոշումը հաղորդեց պարսիկ Մարզպանին, որ վախնալով թէ Վրաստան պատահածը այստեղ ալ պիտի պատահի՝ յաջորդ օրն իսկ փախաւ եւ ամրացաւ Արտաշատի բերդը: Վաչանի մարդիկը փախչող բանակի ետեւէն հասան, անոնց ձգած աւարին տիրացան ու պաշարեցին Արտաշատի բերդը: Մարզպանը գիշեր ատեն գաղտնի փախաւ Ատրպատական: Սակայն ուրացող նախարարները խորհուրդ տուին վերադառնալ եւ ջախջախել ապստամբութիւնը, քանի հայեր դեռ չէին կազմակերպուած պէտք եղած ձեւով:

Արդարեւ վերադարձաւ Մարզպանը գունդով մը եւ ուրացող նախարարներով: Մինչ այդ հայեր իբրեւ Մարզպան ընտրած էին Սահակ Բագրատունին եւ սպարապետ՝ Վահան Մամիկոնեանը: Ասոնք Դուին մնացին կեդրոնը պաշտպանելու համար, իսկ եկող պարսիկ բանակի դէմ ղրկեցին չորս հարիւր լաւ պատրաստուած զօրքեր՝ գլխաւորութեամբ Բաբգէն Սիւնիի, Վահանի եղբօր Վասակ Մամիկոնեանի, Գարջոյլ Մաղխազի, Կամսարական երկու եղբայրներու, Ներսեհի եւ Հրահատի, եւ Ատոմ ու Առատոմ Գնունի եղբայրներու: Ասոնք նախ «եկեղեցի մտան Աստուածոյ երկրպագութիւն ըրին եւ խնդրեցին Անկէ որ իր օգնութիւնը ղրկէ այս ճգնաժամային պայքարին մէջ»: Ստացան նաեւ օրհնութիւնը Ցովհան Մանդակունի կաթողիկոսին, որ որ իր օրհնութեան միացուց նաեւ ճամբու մեծ պաշար:

Այս գունդը ամրացաւ Մասիս լերան լանջքին Ակոռի գիւղը· «ըստ սովորութեան առտու կանուխ ելան եւ կատարեցին Գիշերային ու Առաւօտեան պաշտամունքները· պատրաստուեցան պատերազմի հետեւեալ կրօնական աղաղակով· — Օգնեա՛ մեզ Աստուած Փրկիչ մեր, վասն փառաց անուան քո մի երբեք ասասցեն ի հեթանոսս՝ թէ ո՞ւր է Աստուած նոցա»: Երբ ճակատամարտը սկսաւ Գարջոյլ զաւաճանեց եւ թիկնամիի կողմը անցաւ իր հարիւր զօրքերով· նմացեալ երեք հարիւրը սակայն այնպիսի ուժգնութեամբ ինկան՝ հազար հոգիէ բաղկացեալ պարսիկ բանակի վրայ, որ ցիրուցան եղաւ, ու մարզպանը սկսաւ փախչիլ: Վասակ Մամիկոնեան եւ Բաբգէն Սիւնի հետապնդեցին եւ տեղւոյն վրայ սպաննեցին զայն, ինչպէս նաեւ ուրացող նախարաներէն չատեր: «Ու այն օրը Քրիստոսի հաւատացողներուն համար նշանաւոր ուրախութեան օր եղաւ· իսկ ուրացողներուն համար ամօթի ու կորանքի օր: Ձչմարտուեցաւ մարգարէին այն խօսքը, թէ որոնց որ Աստուած կ՚օգնէ՝ մէկը հազար կը հալածէ, եւ երկուքը տասը հազարը տեղէն կը շարժէ»:



Այս յաղթանակը տօնեցին Դուինի եկեղեցիին մէջ Աստուածոյ գոհութիւն մատուցանելով Մարզպան Սահակ Բագրատունի, Վահան Սպարապետ եւ ամբողջ հայ բանակը Ցովհան կաթողիկոսի գլխաւորութեամբ:

Յաջորդ տարին պարսիկներ հսկայ բանակով եկան Հեր եւ Ջարեւանդ գաւառը, ուր տեղի ունեցած էր Վարդանանց պատերազմը: Ասոնց դէմ ելան օրուան բոլոր ուխտապահները, Սահակ Բագրատունի Մարզպանը, Վահան եւ եղբայրները, Կամսարական եղբայրներ եւ բազմաթիւ ուրիշ նախարարներ եւ բանակեցան Ներսեհապատ գիւղը: Պատերազմը սաստիկ եղաւ· ողորմութեամբ Աստուածոյ հայեր չատ փայլուն յաղթանակ մը տարին նաեւ այստեղ եւ հոգեւոր ուրախութիւն սարքեցին Ցովհան կաթողիկոսի գլխաւորութեամբ: Ուրախութիւնը կը կրկնապատկուի երբ պատերազմէն յետոյ Վահանի կրտսեր եղբայրը՝ Վարդ՝ Պարսկաստանի իր պատանդութենէն փախչելով հայրենիք կը վերադառնայ:

Վրաց թագաւորը պարսիկներէն նեղուելով հայերը օգնութեան կանչեց· հայերը դժբախտաբար զացին: Հակառակ մերոնց քաջագործութեանց՝ Վրացիներ նահանջեցին, որով ոչ միայն պատերազմը կորսնցուցին, այլ նաեւ հայ բանակի կարեւորագոյն

տարբերէն երկուքը՝ Սահակ Բագրատունի Մարզպանը եւ Վահանի եղբայր Վասակը նահատակուեցան պատերազմի ընթացքին: Վահան քաչուեցաւ Տայքի իր ամրութիւնները : Թէեւ պարսիկ զօրավարը հետապնդեց զայն մինչեւ այն տեղերը, սակայն Արքունիք կանչուելով Վահան ազատեցաւ անոր հետապնդումէն:

Վահան կրկին վերադարձաւ Դուին եւ ձմեռը անցուց այնտեղ: Գարնան հսկայ պարսկական նոր բանակ մը եկաւ Դուինի դրացի Արտաշատ քաղաքը: Վահան տեսնելով որ իր չուրջը կռուող մեծ զօրք չունի հեռացաւ Դուինէն: Գրեթէ տարի մը այսպէս աստանդական ու թափառական չրջեցաւ Հիւս. Հայաստանի լեռնային մասերը, հալածուած պարսիկներէ: Յաճախ թշնամիին յանկարծական հարուածներ կուտար ու կը փախչէր: Իր չուրջի զօրքերը օրէ օր աւելի կը պակսէին, այնպէս որ նման ընդհարումներու վերջին ընթացքին, հազիւ 30–40 ձիաւոր զօրքով ճեղքեց 4 հազարնոց պարսկական բանակը եւ սպաննեց անոնց զինակից ուրացեալ Գդիհոն Սիւնին եւ ցրուեց Սիւնեաց զօրքը, որ կը գործակցէր պարսից:

Ճգնաժամային այդ օրերուն, երբ Վահանի սկսած չարժումը ձախողութեամբ վերջանալու վտանգին ենթարկուած էր, լուր հասաւ Հայաստան թէ, պարսից Պէրոզ թագաւորը, Վահանին եւ Հայ ժողովուրդին պատճառուած այս նեղութեանց եւ չարեաց պատճառը, Հեփթաղներու դէմ բացած պատերազմին մէջ մեռած էր: Ուստի Վահանը հետապնդող Շապուհ զօրավարը եւ իր բանակը արքունիք կանչուեցան: Վահան այսպէս երկրորդ անգամ ըլլալով փրկուեցաւ թշնամիի ճնշումներէն եւ ազատաբար վերադարձաւ նախ էջմիածին, ուր գոհաբանական աղօթքներ եղան: Այս առթիւ հիմնովին նորոգեց էջմիածնի հնացեալ տաճարը: Ապա անցաւ օրուան մայրաքաղաքը՝ Դուին եւ դարձեալ երկրին ղեկը իր ձեռքն առաւ:

Պէրոզին տեղ թագաւորեց իր եղբայրը Վաղարշ, որ աւելի մեղմ քաղաքականութեան հետեւեցաւ հայոց հանդէպ: Այս նպատակով Հայաստան պատգամաւորութիւն մը ղրկեց ըսելու, թէ ինք հաշտութիւն եւ խաղաղութիւն կ'ուզէ հաստատել հայոց հետ, եւ պաշտօն տրուած է Նիխոր նախարարին, որ Հեր գաւառի Նուարսակ գիւղին մէջ կը սպասէ բանակցութեան համար: Վահան նախ իր մօտ հրաւիրեց նախարարները եւ օրուան կաթողիկոսի մասնակցութեամբ խորհրդակցեցան: Ամէն ոք պատրաստ էր պատերազմական վիճակին վերջ տալու եւ պատուաւոր հաշտութիւն կնքելու: Սակայն ամէն բանէ առաջ ուզեց, որ պարսից արքունիքը բացարձակ խոստում եւ ապահովութիւն տայ հետեւեալ երեք կէտերու մասին:

1.– Քրիստոնէութիւնը բացարձակապէս ազատ ըլլայ Հայաստանի մէջ. ոչ ոքի ուրացութիւն պարտադրուի. ուրացութիւնը արժանիք չնկատուի: Կրակի պաշտամունքի վայրեր պէտք է փակուին Հայաստանի մէջ:

2.– Պետական պաշտօններու համար լաւն ու վատը, պիտանին եւ անպիտանը, վաստակաւորը եւ անվաստակը, իմաստունը եւ անիմաստը որոշուին եւ անարժաններ առաջ չքշուին:

3.– Երկրին խնդիրները թագաւորը անձամբ տեսնէ եւ դատէ. ուրիշներու թելադրանքով չչարժի:

Վահան պարսիկ պատգամաւորութեան ընկերացուց իր պատգամաւորները եւ ղրկեց Նիխորին, որ ընդունելի եւ գնահատելի գտաւ Վահանի առաջարկները, եւ հրաւիրեց Վահանը որ անձամբ ներկայանայ պաշտօնական հասկացողութեան գալու համար: Վահան ճամբայ ելաւ զօրագունդով մը եւ հասաւ այն Արտազու դաշտը, որ նշանաւոր էր եղած Աւարայրի ճակատամարտով եւ իր մղած Ներսեհապատի յաղթական պատերազմով: Նախ պարսիկներէն պատանդներ ուզեց անհաճոյ անակնկալի չգալու համար: Նիխոր ութ բարձրաստիճան նախարարներ ղրկեց: Վահան իր գունդով եւ փողեր հնչեցնելով մտաւ Նիխորի բանակատեղին, որուն վրայ Նիխոր մեղմութեամբ

յիշեցուց որ փողեր հնչեցնելով միայն Սպարապետը կը մտնէ Արեաց բանակը: Վահան պատասխանեց. «Նախ զիս պարսից թագաւորին հպատակ ըրէ, անկէ յետոյ ես գիտեմ յարգել պատշաճութիւնները»:

Տեսակցութիւնները չատ սիրալիր ու յարգալիր անցան: Պատուասիրութիւններ առատացան, անցեալ եղելութեանց անդրադարձներ եղան եւ ամբողջ յանցանքը եւ պատասխանատուութիւնը Պէրոզ թագաւորին վրայ բեռցուցին: Վահան կրկնեց իր երեք առաջարկները եւ անոնց՝ «թագաւորին գիրով եւ կնիքով չնորհուիլը» պահանջեց: Նիխոր համաձայն եղաւ եւ քանի մը օր եւս պատուելով իր հիւրերը բաժնուեցան, թելադրելով Վահանին, որ անձամբ ներկայանայ պարսիկ արքունիքը ստանալու համար թագաւորին ձեռքէն իր պայմաններուն չնորհումը:

Փառաւոր եղաւ Վահանի մուտքը պարսից մայրաքաղաքը: Շքեղ ընդունելութիւն կատարուեցաւ ու երբ թագաւորին ներկայացաւ՝ փոխադարձ ատենաբանութիւններ եղան: Վահան ստացաւ իր առաջարկներուն պաշտօնագիրը թագաւորին գիրով եւ կնիքով: Ինք Սպարապետ նշանակուեցաւ Հայաստանի, պարսիկ մը, Անդեկան անուն, «այր խելացի եւ իմաստահայեաց» Հայոց Մարզպան նշանակուեցաւ. այսպէս փառքով, մեծ յաջողութեամբ, եւ ուրախութեամբ դարձան Հայաստան 485-ի գարնան:

Նախ գացին Վաղարշապատ, եւ «կաթողիկէ Ս. Էջմիածնի եկեղեցիին մէջ եւ կուսանաց նահատակեալ տեղերու մէջ ցնծութեամբ գոհաբանական աղօթքներ կատարեցին եւ հանդէսներ սարքեցին, ուխտեր կատարեցին եւ նուէրներ բաշխեցին աղքատաց»: Քանի մը օրեր հանգչեցան ու վերադարձան Դուին, որ այլեւս հայոց նոր քաղաքական կեդրոնը դարձեր էր: Ժամանակ մը վերջ Անդեկան Մարզպան տեսնելով Վահանին հաւատարմութիւնը եւ յաջողակութիւնը նաեւ վարչական ու քաղաքական գործերու մէջ, վերադարձաւ պարսից արքունիք եւ համոզեց թագաւորը եւ աւագանին, որ մարզպանութիւնն ալ Վահանին յանձնուի, ինչ որ արդարեւ եղաւ յատուկ արքայական հրովարտակով, նոյն տարիին վերջերը, ի մեծ ուրախութիւն ամբողջ հայ ժողովորդին ու օրուան Հայոց Կաթողիկոսին, որ կրօնական հանդիսութեամբ եւ զեղեցիկ ճառով մը պսակեց Վահանի բացառիկ յաջողութիւնները, որոնց մէջ այնքան զգալի էին աստուածային միջամտութիւնները եւ օգնութիւնները:

Վահան չուրջ 20-25 տարիներ եւս ամենայն խաղաղութեամբ, աշխարհաշինութեամբ, հաշտութեամբ եւ համերաշխութեամբ կառավարեց իր երկիրը եւ գնաց միանալ իր նահատակ նախնիքներուն, որոնց սկսած գործը, անոնց իսկ բարեխօսութեամբ, այսպէս պսակեց աննախընթաց յաջողութեամբ եւ անմահ անուն մը ձգեց հայոց ժողովուրդի պատմութեան մէջ իր մեծանուն հօրեղբօր, իր բարեյիշատակ հօր եւ այլ հազարաւոր Վարդանանց եւ Վահանեանց նահատակներու հետ:

«Հայազգի Սուրբեր»



ԽՈՐՀՈՒՐԴ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Ա.

Գիշեր մը երբեմ այսպէս լուռ ու լուրջ
Չէ դիզուած, հսկա՛ծ բանակի մը շուրջ։

Եւ բանակ մ'երբեմ, խաւարին մէջտեղ,
Չէ եղած այսպէս լուսագեղ, անմե՛ղ։

Երկինքն այս գիշեր երկիրը կ'օրրէ,
Հոգիներն Հայոց իրմով կը խմորէ։

Հոս՝ խաչեր, եւ հոն՝ սաղաւարտ ու սուր՝
Խաւարի ծովուն շիթերն են մաճուր։

Հրամա՛ն Վարդանի. — Ամէն կողմ ահա՛
Կոչնակներու կանչն հանդարտ կը թրթռայ։

Ամէն կողմ սեղան, մոմեր, երէցներ.
Բանակը ճաշա՛կ կ'առնէ այս գիշեր։

Է՛ն վերջը Վարդան՝ գլխաբաց, հետի,
Կուգայ հաղորդուիլ արեամբն Յիսուսի։

Եւ խաչ հանելով՝ զինուորներն ամէն
Կը դառնան խումբ-խումբ ··· ու խո՛ր կը նիրհեն···



Բ.

Դաշտն՝ արշալոյսին՝ խունկ է, կը մըխա՛յ.
Զէնքերու շաչիւնն իր շուրջն է ծնծղայ։

Թշնամի բանակն, ամպի պէս խաւար,
Կ'երեւայ հեռուն եւ կը սահի վար···։

— «Վասըն Յիսուսի, վասըն Հայրենեաց՝
Ցառա՛ջ». Վարդա՛նի ձայնը հոն գոռաց···։

Փիչ յետոյ արդէն խառնուրդն է անհուն···
Կեանքէ կեա՛նք կ'երթան զինուորներն Հայուն····

Վարդան, իր ներմակ ձիով, զրահով,
Ամենքէն առաջ, ամենքին է fով։

— «Ցաղթեցի՛նք, կ'ըսէ, Պարսիկը փախաւ···»
Ու կ'իյնա՛յ՝ տալով իր հոգին ամբաւ···։

Գ.

Սեւցած երկընքին ներքեւ՝ երկընքի
Ճաճանչ մը յանկարծ գետնէն կը ծագի։

Վարդանի հոգին, հրրագո՛ւնտ անշէջ,
Կը մտնէ՛ մըռայլ ապագային մէջ։

Հոգիներուն մէջ ան կ'երթա՛յ առաջ՝
Հոգիներէն դուրս ցրցած սուր ու խաչ։

Կը զարնէ խաչովն, ու սուրովը՝ գիր
Կը գրէ, կ'օրհնէ՛ Վարդանը Կարմիր։

Դարերը կ'անցնին՝ բայց Վարդանը Քաջ,
Բայց Վարդանը Սուրբ, կ'երթա՛յ միշտ առաջ···։

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

Ե· ԴԱՐ

ԳԻՐՔԸ

Ընծայաբանութեան մէջ որ յառաջաբանն է այս օրերուն, Փարպեցին կը յիշէ զինքը կանխող պատմագիրները (Ագաթանգեղոս եւ Բիւզանդ) եւ իր ըրածը անոնց գործին չարունակութիւնը կը կարծէ։

Հատորը բաժնուած է երեք դրուագի։ Առաջինը կը սկսի ան հետաքրքրական մտածումներով Բիւզանդի վրայ ուր գրչագրի յանդուգն խառնակչութիւններ կ'ուզէ նշմարել, արդարացնելու համար անոր կարգ մը առասպելական կողմերը։ Ցետոյ կ'անցնի դէպքերու չարայարումին։

Արշակունեաց թագաւորութիւնը երկուքի բաժնուած։ Արշակ՝ թոյլ ու կրօնամոլ թագաւոր, կը ձգէ իր երկիրը, Արարատեան Հայաստանը եւ կ'ապաստանի յունական բաժինը։ (Փախուստի այս մտալկումներուն մէջէն Փարպեցի միջոցը կը գտնէ Արարատեան Հայաստանի տարօրինակ նկարագրութիւն մը տեղաւորելու։) Տեղը կ'անցնի Խոսրով որ զոհ կ'երթայ նախարարներու սադրանքին ու կը ձգուի գահէն Շապուհի ձեռքով։ Վռամշապուհ։ Գիրերու գիւտը։ Խոսրովի կրկին թագաւորելը։ Տղուն՝ Արտաշէսին՝ նկարագիրը։ Նախարարները դժգոհ են միշտ։ Սահակի միջնորդութիւնը գահը փրկելու համար։ Թագաւորը գահընկէց։ Սահակ կը բանտարկուի Տիզբոնի մէջ։ Երկրին թշուառութիւնը։ Նախարարները կը դիմեն ղարձեալ Սահակին որ կը մերժէ կրկին կաթողիկոս ըլլալու առաջարկը, կը պատմէ իր նշանաւոր տեսիլքը, յետոյ կ'ապրի առանձնական իր կեանքը ու կը վախճանի։ Իրմէ վեց ամիս յետոյ կը մեռնի Մեսրոպ։ Առաջին դրուագը վերջացած է։



Երկրորդ դրուագին նիւթն է Վարդանանց պատերազմը։ Ամէնը՝ ինչ որ ունի Եղիշէ։ Աւելի՝ թանկագին մանրամասնութիւններ։ Աւելի՝ պատմագրի աչքով ընդգրկուած դէպքերու չարայարում ուր կարծես կը ձգտի երեւոյթներու պատճառները հասկացողութեան ու թափանցումին (անշուշտ միշտ տարրական։) Քարոզ ու նամականի՝ չատ քիչ։

Երրորդ դրուագը կը պատմէ նախարարներու դարձը, Մամիկոնեան Վահանին Վրաց Աչուչա բդեչխին տունը տարուիլը· երկրին մէջ, ուրացեալներուն չարագործութիւնները· Գիւտ Կաթողիկոսին նկարագիրը, ամբաստանուիլը ու Դուռ կանչուիլը, պաշտօնանկութիւնը։ Վահան Մամիկոնեան տակաւ կը սկսի փայլիլ։ Ամբաստանուիլը։ Կ'երթայ Դուռ եւ ազատելու համար կ'ուրանայ հաւատքը։ Դարձը երկիր ու ապստամբիլը։ Այս դրուագին մեծ մասը կը գրաւեն անոր հրոսակային կռիւները, մինչեւ որ պարսկական արքունիքը կը ստիպուի հաչտուիլ ու Վահանը սպարապետ ու մարզպան նշանակել Հայաստանի։ Ցովհան Մանդակունի այս աւետիսը կը հաղորդէ եկեղեցիին բեմէն, ժողովուրդին, պերճախօս ատենաբանութեան մը մէջ որ գիրքը կը փակէ։

Սովորութիւն եղած է Փարպեցիի Հայոց Պատմութեան կցել նաեւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան անունով գրուած մը ուր դառնացած, վչտոտ բայց կենդանի ոճով մը Փարպեցի կը փորձէ ինքզինքը պաշտպանել իր վրայ ծանրացող ամբաստա-

նուիրենէն երբ Վաղարշապատի վանքին վանահայր նշանակուած էր։ Թուղթը կարեւոր է մանաւանդ ժամանակակից կղերին վրայ իր տեղեկութիւններով։

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԺԷՔ

Փարպեցիին գործը իբր պատմութիւն՝ մեր դասական մատենագրութեան ամէնէն յաջողներէն մէկն է, չըսելու համար նոյնիսկ ամէնէն յաջողը։ Անիկա զարու մը կեանքը կը պատմէ մեզի, որուն կէսը ինք ապրեցաւ ու կէսին ալ տարեգրութիւնները դեռ չատ թարմ էին։ Ինչ որ կը հաղորդէ պատմիչը, գրեթէ միշտ դուրս չ'ելլեր պատմական իրողութեան սահմանէն։ Նոյնիսկ Վահանի անհաւատալի կռիւները, երեսուն հոգիով երեք հազարներ ցիրուցան ընելը հասկնալի եւ իրական կը մնան։ Եթէ երբեմն կը չեղի դէպքերու դրուագումէն ու բարոյախօսութիւն կ'ընէ, գիտէ չահեկան մնալ, բարքերու պատկերացումով ու պարսաւին պղպեղովը համեմելու համար քարոզին աստուածաբանական ու ընթացիկ զօրութիւնը, միօրինակութիւնը, կէտեր՝ որոնք խորապէս կը վիրաւորեն Եղիշէն։ Վարդանանց պատերազմին դրուագը՝ իբր պատմութիւն՝ ունի վաւերագրական (documentaire) տոկունութիւն՝ ինչպէս նաեւ ականատեսի անփոխարինելի կենդանութիւն։ Անուշտ չրջանին յուզեալ հանգամանքը պիտի ազդէր պատմիչին վրայ ու պիտի կոտրէր անոր թափը, դասական ընդլայնումներու այնքան նուիրուած իր բնական միտումը, հելլէն պատմագիրներու մօտ ուսումնասիրուած կառուցման ու չարայարման ընդունակութիւնները։ Ասոնք կը պակսին ու այս պակասը դէպքերէն՝ կ'անդրադառնայ անոնց պատկերացումին։

ՊԱՏՄՈՂԸ



Առաջնակարգ պատմող մըն է ան։ Իր գործէն կ'անջատուի, առանց ճիգի, ընդհանուր ըմբռնում մը որ կտոր կտոր կը կազմուի ընթերցողին մտքին մէջ։ Յատակագիծ ու իմաստասիրութիւն չեն անցնիր մտքէս։ Բայց անկարելի է ուրանալ թէ պատմիչը գիտէ իր գործին մեծ բաժանումները եւ կ'աշխատի հաւատարիմ մնալ ինքնիրեն։

Քիչ անգամ քրոնիկագիր է։ Եթէ դէպքերու ցամաք ու ճիշդ շարայարումը նկարագիր մըն է այս ձեւ գրողին մօտ, ասիկա չատ ալ փափաքելի պիտի չըլլար մեր մատենագրութեան համար ուր մտքի բազմատեսակ արտայայտութիւնները ուրիշ տեղ չունէին իրանալու։ Ուր, գրականութիւն, բանաստեղծութիւն, բարոյախօսութիւն, քարոզ, նոյնիսկ նամակ պարտաւորուած էին ապաստան գտնելու պատմութեան գիրկը։ Այսպէսով է որ մեր հին պատմագրութիւնը կ'անջատուի ընդհանուր, դասական կաղապարէն ու կ'ըլլայ մեզի, Հայերուս յատուկ պատմելու ձեւի մը։

Փարպեցի կը տիրապետէ դէպքերուն։ Անոր գործին առաջին դրուագը, արդէն ուրիչներու կողմէն անգամ մը ինկած գիրի տակ՝ իր ոճին տակ կը զգենու տեսակ մը սեղմ ու իրական նկարագիր։ Ագաթանգեղոսի հրաշալին եւ Բիւզանդի վիպասանական յորդութիւնը կը չափաւորուին լրջութեան, ճշգրտութեան, տարրական դատումի կնիքովը։ Անիկա իրողութիւնները կը զսպէ— եթէ ներելի է այս ձեւ բացատրութիւն մը— հակակշռի նմանող ողջմտութեամբ մը։ Այս կարեւոր զգայարանքը անգնահատելի ծառայութիւն բերաւ իրեն, մանաւանդ երկորդ դրուագին մէջ ուր վտանգը վերահաս էր (ու եղաւ) ուրիշ յատկութիւններով լեցուն գրողներու։ Եթէ երրորդ դրուագին մէջն մենք նիւթը— այսինքն դէպքերը— վար կը դատենք պատմողին առաքինութիւններէն, յանցանքը իրը չէ ապահովաբար։ Վահան Մամիկոնեան անբաւական զօրավար է։ Անոր կռիւները չեն բաւեր այդ խմորէ պատմիչի մը պահանջներուն։ Գրողը հոդ ստիպուած է չեղիլ իր սկզբունքներէն եւ պատմել գրեթէ հրոսային կռիւներ, որոնց հանդէպ իր բոնի խանդավառութիւնը մեզ չի զարմացներ այսօր։

Բայց Փարպեցին պատմել գիտէ: Ըլլան մեծ envergureով եղելութիւններ, ըլլան անէքտոթիք դրուագներ, անիկա հաւասար յաջողութեամբ զլուխ կը հանէ պատմելու դժուար գործը: Իր մէջ հաճոյքով կը հաստատենք տիրապետող քաղաքականութեանց պատչաճ ըմբռնումը եւ ատոնք դատելու ճեռնարկ մը: Աւելին՝ տեսակ մը իմաստասիրական փորձ՝ դէպքերուն եւ սկզբունքներուն ներքին զսպանակներուն մօտենալու: Իր մօտ, նախախնամութիւնը ամէն բան չէ պատմութեան թաւալին մէջ, ինչպէս է պարագան բացառաբար Եղիշէի համար: Ցետոյ, դէպքերու ցուցադրումին մէջ անըզգալաբար անիկա երեւան կը բերէ նաեւ մեր ցեղին հոգեբանութիւնը ու անոր ճակատագրին մեծ ազդակները այդքան կանուխէն: Անոր էջերէն դուրս կուգայ մեր քաղաքականութիւնը իր դարաւոր բայց զրեթէ մինչեւ հիմա անփոփոխ դիմայեղումներով: Քրիստոնէութիւնը քիչ բան աւելցուցած է այդ լեռնականներուն հոգեկան աշխարհին մէջ բացի կոյր ու ահաւոր մոլեռանդութենէ մը, որ կարգ մը նախարարութեանց մենաշնորհը, նոյն ատեն վահանը կը դառնայ: Կարծես այսօրուան մեր պառակտումներն են որ տասնըհինգ դար առաջ կը բզկտեն մեր եղերաբախտ երկիրը: Փարպեցի գիտէ մեր իրերամարտ ձգտումները լոյսին բերել, ինչպէս կը յաջողի ստոյգ պատկերի մը տակ ներկայացնել այն օրերու մեր քաղաքական հոգեբանութիւնը, որ այսօրուանն է նոյնութեամբ.— ծառայի հոգեբանութիւն, որ Աւետարանն անգամ օգնութեան կը կանչէ իր ստրկութիւնը վաւերական ընծայելու: Այս տխուր ստուգութիւնը ոչ ոք այնքան իրապաշտ երանգով մը արտայայտած է մեր մէջ, որքան հինգերորդ դարու մեր հերոսները Վարդան կամ Վահան, Ղեւոնդ կամ Գիւտ: Փարպեցին անհատական դրուագներն ալ կուտայ նոյն ժուժկալութեամբ: Վահան Մամիկոնեանի կենդանագիրը այդպէս պզտիկ պզտիկ կտորներով կը չինուի: Ու գիրքին չատ էջերուն մէջ կարելի է հանդիպիլ նշանակալից ու համոզող անէքտոթներու, որոնց մասին այնքան ժլատ է մանաւանդ ականատես(!) պատմիչը, Եղիշէն:

ՓԱՐՊԵՑԻԻ ԱՇԽԱՐՀԸ

Ինչպէս վերը դիտել տրուեցաւ, պատմութիւնը քիչ մը ամէն բան է մեզի համար: Այս սկզբունքէն մեկնելով դժուար չէ փորձել մեր ընկերութեան ընդհանուր պատկերացում մը, որքան ալ պակասաւոր ու խնդրական ըլլայ անիկա: Ուրեմն՝

1. — Թագաւորներ: Անոնք նոյն խեղճ արարածները կը ներկայանան մեզի, ինչպէս տրուած էր արդէն անկէ առաջ Փաւստոս Բիւզանդը: Փարպեցին աւելորդ կը կարծէ ծանրանալ այդ մարդոց բարոյական անհուն տկարութեանց վրայ: Արդէն նախապէս դատած է զանոնք իբր բարոյական միութիւն: Կը զբաղի առաւելապէս անոնց քաղաքական իմաստովը: ու անոր գրիչին տակ խամաճիկներ են այդ երանելի արքաները որոնք կը խաղան Պոլիսէն կամ Տիզբոնէն երկարած լարերու վրայ: Մէկը մանաւանդ պժգալիօրէն տխուր է իր ոչնչութեանը մէջ: —Արշակ երրորդը, որ կը մտածէ իր սիրելի, «Բնակ» նահանգը —Այրարատը— ձգել ու հեռանալ Յունական Հայաստան, փոխանակուած բերդի մը մէջ Էրիատուեայ մեռնելու ներքինի ցանկութեամբ:

2. — Նախարարներ: Գլխաւորաբար ներկայացուցած է Մամիկոնեան ու Կամսարական տուները: Աւարայրի հերոսը աւելի պարկեշտ, տանելի է հոս քան Եղիշէի մէջ: Վահանը սակայն խնամուած ուսումնասիրութեան մը նիւթ է Փարպեցիին համար: Պատմիչը կը ճանչնայ զայն չատ մօտէն: Անիկա մեծցած է ապագայ մարզպանին հետ, նոյնիսկ հեռաւոր մանկութեան օրերէն: Հետեւած՝ անոր փոփոխական բախտին: Ու կ'ապրեցնէ զայն իր էջերուն վրայ խնամոտ գուրգուրանքով մը: Անոր կռիւները կը խոչորցնէ, կը զարդարէ որքան կը ներեն իր խղճմտութիւնն ու պատմողի բնազդը: Անոր բերանը կը դնէ ցեղային իմաստութեան խօսքեր: Անոր կը չնորհէ տեսակ մը

հպարտ առնականութիւն, որ Արքայից Արքային պաշտօնակալները թէ կը վախցնէ թէ կը հրապուրէ: Զայն կը հանէ արքունի ատեաններու, ուր անոր խօսքերը, մտածումները, չեչոն ու կեցուածքը քաղցրօրէն դիւցազնական բայց նոյն ատեն իրական կը մնան: Գիրքը գրուած ըլլալով Վահանին իսկ առաջարկութեամբ, հասկնալի են այս հերոսական ստորոգումները: Փարպեցի վայելած է իշխանին համակրանքը: Զարախօսութիւններ աչքէ հանած են զինքը: Թուղթին մէջ (գրուած՝ ինքնարդարացման համար) պատմիչին լեզուն ղարճեալ կը պահէ չափը ու ածականներ չռայլելով հանդերձ կը յաջողի փրկել տարրական արժանապատուութիւն մը: Ի՞նչ էր վերջապէս «պարեգօտաւոր» գրող մը: Ի՞նչ է եղած վիճակը բոլոր մտաւորականներուն՝ մեկենասներու այդ ու աւելի մօտ շրջաններուն:

Նախարարներու երկրորդ կարգ մը —ուրացողներ— կ'արժանանայ պատմիչին թանձր արհամարհանքին: Ասոնց բարքերը, քսութիւնները, ուրացումները, հոգեկան անկումները լայն էջեր կը գրաւեն թէ եղելութեան թէ քարոզի ձեւով:

3. — Կրօնականներ: Պատմողը իսկական արժանիքին կը բարձրանայ երբ կը գծէ Ե. դարու այն մեծ դէմքերը որոնք Եկեղեցիէն կուգան: Երկրորդ դրուագին մէջ նահատակուող եկեղեցականները կը հասնին սրբազան ոճին: Սահակ ու Գիւտ կաթողիկոսները կը ներկայանան մեզի մաքրութեամբ մը, չնորհով մը, մեծութեամբ մը որ կը հաւասարի Բիւզանդի Ներսէսին: Ու վկայաբանութիւնը չատ տարտամ ձեւով մը կը միջամտէ այս կառուցումներուն մէջ: (Սահակի տեսիլքը որ Ագաթանգեղոսին մէջ Գրիգորին կը վերագրուի, բանասէրները չեն ուզեր վաւերական նկատել:)

4. — Ժողովուրդ: Անցեալին մէջ պատմութիւնը քիչ կը զբաղի ժողովուրդով: Փարպեցին չէր կրնար բացառութիւն կազմել: Բայց իր գիրքէն կարելի կ'ըլլայ տարտամօրէն ընդհնչմարել զանգուածը որ կը քնանայ, թանձր տարրի մը նման, այդ խըրոխայոյզ փոթորկումներու պահուն: Արհեստաւորներ, տղաք, կիներ կը յիշուին: Կան հնձողներ որոնք բաւական հայ են զինուոր հալածող պարսիկ մը մորթելու համար: Անոնց բարքերէն մասեր կը մտնեն մեծ պատկերացումին մէջ որ պատմիչը ընդմիջաբար կուտայ զանազան առիթներով:

5. — Պարսիկներ: Յատկանշական պարագայ՝ Փարպեցիի Պարսիկները բոլորովին կը տարբերին մեր մատենագրութեան տուած քլիշէ կաղապարէն: Անոնք ուրիշ խըմորով մարդեր են: Ըլլան արքաներ, մոգեր կամ զօրավարներ, անոնք քաղաքական դիմագծութիւն ունին: Պատմիչը համայքին տակն է այդ մեծ երկրին ու անկէ բխող զօրութեան: Հպատակ ժողովուրդի զաւակ՝ անիկա կը յաջողի գրեթէ ըմբռնել ուժին դերը որ անխուսափելի կերպով մը կը ճնշէ իր հայրենիքին վրայ: Արեւելքի ու արեւմուտքի բախումին խորունկ նշանակութիւնն ալ չի վրիպիր իր հասողութենէն: Այս պայմաններով, արիներուն բռնապետութիւնը չէ չափազանցուած, երբ ամէն բան զինքը պիտի մղէին այդ ճամբուն: Քրիստոնեայ մոլեռանդութիւնը, սասանեան հալածանքներուն սաստկացումը, յունական մշակոյթը, բանակներով արշաւներ, կոտորած ու քայքայում, ասոնք բոլորը չեն չեղեցուցած պատմի հիշդ տեսնելէ: Եթէ քանի մը մութ տիպարներ ելած են իր գրչէն, չատեր ալ կը տրուին իրական մեծութեան, իմաստութեան, նոյն իսկ ազնուութեան երանգներով: Միհր-Ներսեհ ճիշդ տրամաբանող պետական անձնաւորութիւն մըն է: Իր նախագահած հաւատաքննական ատեանները ազատամտութեան ու արդարադատութեան կորով մը երեւան կը բերեն: Ուրիշներ իրաւունք տալ գիտեն արդար դիտողութիւններու: Շապուհ զօրավարը որ անդադար ծեծ կ'ուտէ Վահան Մամիկոնեանէն, չի կրնար իր հիացումը ծածկել անոր մասին, արքունի դիւանին մէջ. կամ՝ ասպետական մեծանձնութեան մը ապացոյցը կուտայ երբ կը հրամայէ սրբութեամբ պահել կամաւորական եղբայրներու կիները որոնք Յունական Հայաստանի մէջ գերի կը բռնուէին պարսկական խումբերու անակնկալ մէկ

յարձակումէն։ Ու մարզպաններ կան անոր գիրքին մէջ որ հանճարեղ յղացումներ ունին ու արքայից արքան կը թելադրեն երկրին, այսինքն Հայաստանի կառավարութիւնը յանձնել բնիկ իշխաններու։ (Ասոնք չատ աւելի մօտէն կը ճանչնան մարդերը, պայմանները։) Արիներուն համար աւելի նպաստաւոր պիտի ըլլար տեղական տարրերով կառավարել հիւսիսական ազգերու ամէնէն զօրաւորը, որուն նուաճումը, խաղաղ թափանցումով, կայսրութիւնը պիտի ապահովէր հիւսիսէն ու թերեւս արեւմուտքէն։ Անոնց կրօնական մոլեռանդութիւնն ալ կը մնայ հանդուրժելի եւ իրաւ։ Եղիշէի պատմածին նման կրօնագիտութիւն չեն դասախօսեր անոնք։

6· — Դրացիներ։ Կովկասեան ցեղերու այս խառնարանը, որ մեր պատմութեան տուած է այնքան յատուկ անուններ ազգերու եւ որ կը յիշուի «հանուրց հիւսիսականաց» յատկանշական տիտղոսով մը, Փարպեցիին մէջ ուսումնասիրուած է որոշ չափով մը։ Արեւմտեան կայսրութեան հանդէպ իր ժուժկալութիւնը կարելի է հակադրել մեր դրացիներուն հետ մեր յարաբերութեանց մասին իր բերած յաճախակի յիշատակութեանց։ Կորիւնի ակնարկութեամբը մեզի ծանօթ ծրագիրը եթէ յայտնագրուած չէ իր մօտ, բայց տուած է այդ ցեղերուն հետ մեր չփումները բաւական կենդանի, լաւ թէ վատ օրերուն։ Մինչ Եղիշէի մէջ մեր դրացիները յատուկ անուններ միայն կը մնան, Փարպեցին կը բերէ անոնց թագաւորները մինչեւ ներս մեր սահմաններէն, նենգ կամ ուղղամիտ գործողութիւններու համար հասարակաց թշնամիին դէմ։ Փարպեցին կը հետաքրքրուի նոյնիսկ հեռաւոր Քուշաններուն դէմ մղուած պատերազմներով։

7· — Բանակը։ Թիւեր քիչ ունի։ Բայց իր գիրքէն կ'արտաբերուի Ե· դարու Հայերուն զինուորական կազմակերպութիւնը։ Զօրաւոր բանակ մըն է ան, գրեթէ բացառաբար այրուձիէ կազմուած։ Իր թագաւորներուն դէմ ապստամբ, նոյն իսկ դաւաճան, այդ բանակը հպարտութիւն կը սեպէ Պարսից չարքերուն մէջ կռիւ մղել արքայից արքային թշնամիներուն դէմ։ Զօրապետներ, սպարապետներ, նախարարներ, նոյնիսկ զինուորներ իրարու հետ կը մրցին «Արեաց բարւոյն» վրայ իրենց անձերը դնելու։ Նախարարները սովորութիւն ունին պարծենալու բոլոր այն «վաստակ»ներուն մասին, որոնք կատարուած են ճակատամարտի դաշտերուն վրայ։



Ցազկերտ չի կրնար մխիթարուիլ Վարդանի մահովը որուն նման դժուար կը կարծէ գտնել բոլոր արիներուն եւ անարիներուն մէջ։ Իր հողը պաշտպանելու համար անարժէք, օտարին հաշուոյն ինքնազոհութեան մօտեցող այս ըօմանթիք առաքինութիւնը հայ զինուորին՝ եղերական ձեւով մը իրական մնաց մինչեւ այսօր։

8· — Երկիրը։ Փարպեցի կուտայ մեր երկրին ընդհանուր դիմագծութիւնը մասնաւոր գլուխով մը (երբ Արշակ Գ· կը խորհի լքել Այրարատը)։ Անիկա դասական ժուժկալութեամբ մը աչքէ կ'անցնէ այն մասնաւոր գիծերը որոնց ամբողջութեամբը ձեւացած է Հայաստանը։ Շնորհալի, կորովի, սրտագրաւ համադրութիւնն է անիկա այն «դրախտագեղ» երկրին որուն ուխտուած ուրացողները եղանք մեր պատմութեան սկիզբէն մինչեւ հիմա։ Փարպեցի արտաքին ու հոգեւորական նկարագրութենէն չ'ախորժիր։ Բայց գիտէ պատրուակ ստեղծել մեզի ցուցադրելու համար գեղեցկութիւններ, որոնք անփոխարինելի կը մնան երկրէն։

ԴԻՏՈՂԸ

Փարպեցիի աշխարհին այս ամփոփ տեղեկագիրը հեռի է այս խոշոր գիծերուն տակ գիրքին ամբողջ պատկերը տալէ։ Վասնզի հեղինակը ճարտար ու յարմարագոյն դիտողութեան մը շնորհներովը հագուեցուցած է այդ ամէնը։ Անոր նայուածքը չէ բանաստեղծ, նախնական տեսնելու ձեւը Բիւզանդին որ իրերն ու մարդերը նոյն անփութութեամբ, նոյն յստակ կարկառներով գիտէ թուղթին յանձնել։ (Արուեստին ու անմիջական իրականութեան այս խառնուրդը արդէն չէ կարելի երկրորդ անգամ

գտնել մեր գրողներուն մէջ։) Փարպեցիի աչքերը զգուշաւոր են։ Անիկա մեծ խնամք ունի պղտոր կամ խոշոր չտեսնելու։ Ուրիշ խօսքով իր մարդերը միշտ կապուած կը պահէ կարելիութեանց աշխարհին հետ։ Անոնց արգիլած է ուռուցիկութիւն, խորութեան պատրուակին տակ ձեւազեղծում։ Միւս կողմէն արտաքին աշխարհը անհաղորդ օտարոտի մարմին մը չէ իր հերոսներուն աչքին։ Աւելորդ է ըսել թէ այժմեան խըղճմըտութեամբ չի վերարտադրեր միջավայրը (դասականները զգուշացած են ատկէ)։

Փարպեցիի դիտողութեան լաւագոյն կալուածն է սակայն ընկերութիւնը։ Թէ՛ Պատմութեան թէ՛ Թուղթին մէջ, անիկա մարդերու կարգի մը վրայ կուտայ որոշ ընդհանրացումներ։ Ուրացող նախարարները կը գծուին զարմանալի ճարտարութեամբ մը, քանի մը յատկանշական տողերով, երբ կ'աչխատին ապստամբի տիտղոս ճարել դրամով։ Բանտարկուած նախարարներու առջեւ, երբ նահատակուելիք եկեղեցականներուն չղթաները կը կոտրեն դուրս հանելու համար զանոնք բանտէն, Փարպեցին կը գտնէ գիծի ցամաքութեան բաթէտիքը, միշտ արագ, խուսափուկ տողերով։ Դարձեալ անոնց կիներուն ճգնութիւնը (երկրին մէջ) կը պատմուի պատշաճ ու վչտական ժուժկալութեամբ մը։ Կեղծաւորութեան, պետական խարդախութեան, ուրացումի, սողալու երեւոյթները իրական խարանումի վերածուած են։ Ու այդ բարոյական խարանումներուն վրայ իր կնիքը դրած է արեւմտեան արուեստին գործաւոր՝ լեռներու քիչ մը վայրագ, յանճնապաստան այս վարդապետը, Ղազարը։ Այս գիծէն նշանաւոր է իր թուղթը որուն մէջ աբեղաներու ընդհանուր դիմագծութիւնը կուտայ անանկ maitriseով մը որ մինչեւ այսօր կը պահէ իր կարկառը, դիպողականութիւնը ու նկարագրին տեւական տարրերը։ Ուրիշ բան չեն ապահովաբար այդ Հայաստանցի նշանաւոր վարդապետները, նոյն իսկ գուցէ մինչեւ հիմա, երբ մախանքով կը նային ամէն օտարամուտ վարդապետութեան ու օտարին միտքերը մեզի փոխադրող մեծ ու պզտիկ բոլոր առաքեալներուն։



ԳՐԱԳԷՏԸ

Փարպեցիի մէջ գրագէտի յատկութիւնները վար չեն միւս կարողութիւններէն։ Ամէնէն առաջ անիկա իրապաշտ գրող մըն է, անշուշտ բառը առնելով ոչ այսօրուան իմաստովը։ Անիկա՝ հակառակ յունարէնի իր խոր հմտութեան՝ չէ ինկած իր ժամանակին զառածումին մէջ։ Վկայաբանական չունչը շատ քիչ է իր մօտ։ Աստուածաբանութիւն եւ աժան բարոյախօսութիւն նոյնպէս քիչ տեղ ունին։ Եթէ Գ. Դրուագին մէջ Պարսիկներուն եւ Վահանի միչեւ տիալոկները քիչ մը դանդաղ կը քալեն, պատճառը գրողէն դուրս պէտք է փնտռել։ Արդէն գործին ամէնէն դժբախտ մասը՝ թէ՛ իբր նիւթ, թէ՛ իբր գործադրութիւն՝ այդ ցաւագար ղրուագն է։ Ու կ'երեւակայեմ խեղճ վարդապետը որ պարտաւոր է երկարելու ու երկարելու իր գրածները որպէս զի ունայնամիտ ու փառասէր իշխանի մը —ինչպէս են առհասարակ բոլոր մեկենասները— բոլոր չարժումները, բառերը, խօսքի կտորները, ընթացիկ խօսակցութեան ամբողջ տաղտուկովը ու տափակութեամբը արձանագրուին ու պատմութեան նիւթ դառնան։ Դարձեալ կը տառապի անիկա, տեղ տալու համար մեծ ու պզտիկ եպիսկոպոսներու վկայաբանական, դաւանաբանական խօսակցութիւններուն։ Ասոնք տկար բան մը կը դնեն ճարտար գրագէտի իր արժանիքներուն քով։

Ու գրագէտ է այս վարդապետը։ Ամէնէն առաջ՝ իր ատենին շատ դժուար իւրացուելիք յատկութեամբ մը՝ ժուժկալութեամբը։ Պէտք չէ չփոթել այս երեւոյթը հարեւանցի (sommaire), արագ յեղումին հետ որ արուեստին չհասած գիրերուն ճակատագիրն է։ Փարպեցի բնազդը ունի արուեստի մէկ քանի սկզբունքներուն։ Անիկա ընտրել գիտէ։ Այնպէս որ իրենց ամփոփ չրջագիծերովը՝ իր գլուխները կ'ընդգրկեն տրուելիք դէպքին կարեւոր երեսները։ Երկրորդ՝ շարժումի իր զգայարանքով։

Պատմութիւնը իբր տինամիզ երեւոյթ ըմբռնելու այս չատ նախնական փորձը խորապէս չահեկան կ'ընէ զինքը: Ու անոր դրուագումները կը քալեն, իրենք իրենց, չկորսնցնելով մղումի այն թափը որ կենսաբանական երեւոյթներուն թաքուն խորքերէն կուգայ: Երրորդ՝ կեանքին տուրճովը: Շարժումին հետ ու անոր քովէն կեանքը կը քալէ Փարպեցիին մէջ, առօրեայ, տագնապուն, հերոսական կամ խեղճ կեանքը մարդուն: Ասիկա թերեւս մեծագոյն բարիքն է գրագէտին: Մարդեր, արտաքին աչխարհ, բարքերու կամ քաղաքակրթութեանց ճնչում, բոլոր այս կարգի ազդակները կը սնանին այս տուրքէն: Ճիշդ է որ Փարպեցին չի կրնար մէկ անգամէն, քանի մը կորովի ու յատկանչական գիծերով՝ մարդեր կեցնել մեր առջեւ, կամ պատմական դէպք մը բեւեռել: Բայց իր պզտիկ, սակայն տեւական նպաստը չի դադրիր բերելէ անձերու կենդանագրին կամ դէպքերու լիակատար ըմբռնումին: Այսպէսով անոր գործը կը ստանայ ուրիշ իրականութիւն, կեանքին, թաւալող, ինքզինքը կրկնող կամ սրբագրող կեանքին մանրանկարը դառնալով թուղթին վրայ:

Այս հիմնական յատկութիւններուն վրայ պէտք պիտի ըլլար աւելցնել տակաւին տեսակ մը ջերմութիւն, որ խառնուածքին նպաստն է ապահովաբար եւ գրագէտը ներկայ կը պահէ էջերուն վրայ, երբեմն ստուերի նման տարտամ, երբեմն իրական գիշերայգի մը նման տպաւորիչ, փրկելով այսպէս գիրքը արչիւական ճակատագրէն: Երկրորդ՝ տեսակ մը ինֆնատպութիւն՝ որուն բաղկացուցիչ տարրերը դժուար է վերագտնել ստուգութեամբ, այսքան հեռուէն: Բայց կայ անիկա, ինչպէս կար Բիւզանդին մօտ, Եղիշէին մօտ· ինչպէս պէտք է կենայ վաւերական ամէն գրագէտի մօտ:

Ասոնցմէ դուրս, անիկա օտար չէ արուեստին քանի մը մեծ օրէնքներուն: Եղիշէ, հակառակ իր արուեստագէտ յօրինուածքին, աւելի մեծ չափով մը մեղանչած է կեանքի օրէնքին դէմ: Անիկա ունեցած է յաճախող չեղումներ, մտածողական ընդլայնումներ որոնք կոտրած են իր մօտ կեանքին չահեկանութիւնը: Ասկէ՝ այն խորտակուած կցկտուր զգայութիւնը զոր կ'ունենանք իր գիրքէն: Փարպեցին իր բոլոր դանդաղութիւններովը, ճառերովը, քարոզներովը կ'ազատի նման դատապարտութենէ մը: Վասն զի գրագէտի իր բնազդը խոր է եւ ապահով: Վասն զի գաղտնիքը ունի ընդմիջումները տիրապետելու ու պահելու զանոնք իրականութեան չրջանակին, հասողութեան մէջ: Ու կեանքին ալիքը երբեք չի կտրեր: Եղիշէ ֆրազները ղեկավարելու պահուն առանց գիտնալու կը հեռանայ դէպքերուն աղբիւրէն: Մինչդեռ Փարպեցիին մօտ կը զգաս որ չարժումին մեծ զարկը՝ որուն մտրակումին տակ մարդերն ու եղելութիւնները կը վազեն, կ'անցնի էջին, խօսքերուն, նոյն իսկ բառերուն ներսը: Այս պարագան կ'ազատէ անոնց անտեղութիւնն ու մեզ համբերատար ալ կ'ընէ:

Անիկա, ապահովաբար ուսումնասիրած է յունական դպրոցներուն մէջ դասական պատմութիւնը: Ցետոյ իր թուղթին մէջ տեղ մը կ'ակնարկէ իր հաղցր խօսելուն: Հռետորական մարզանքէ անցած, գործին բերումով տարիներով խօսած, այսինքն առեղնախօսած մարդու մը համար ամէնէն ազնիւ առաքինութիւնն է գրած առեղը կարելի չափով քիչ հռետոր ըլլալ: Ու փարպեցին կրցած է ըլլալ առիկա:

Իր գործին մէջ, ի գովեստ իրեն, չատ քիչ են զուտ հռետորական մտահոգութենէ եկող էջերը: Երրորդ դրուագին խօսակցութիւնները, գործնական իմաստութեամբ մը, հանդարտ տողերու կը վերածուին: Երկրորդ դրուագին մէջ, նահատակուող եկեղեցականներու հարց-պատասխանին չատ քիչ աւելորդ ընդլայնում ունի: Համբաւաւոր գլուխը առաջին դրուագին մէջ ուր Արարատեան նահանգին նկարագրութիւնը կ'ընէ, հեռու է հռետորական մչակումէ եւ արդիւնքէ: Ցետոյ, բաթէդիքի պահերուն, կամ չարժումները պատրաստելու համար անիկա չի զոհեր կեանքին չահեկանութիւնը, ու բառերով չի խաղար, ինչպէս է պարագան այնքան յաճախ Եղիշէին մօտ:

Ու վերջացնելու համար հարկ է խոստովանիլ անոր մօտ անփոխարինելի առաքինութիւնը, —իրական, մինչեւ վերջը իրական մնալ կարենալու մեծ չնորհը, երբ յաջողի մարդ այդ տուրքը արուեստին տանելու: Փարպեցիի գործը անշուշտ չէ հասած մեծ արուեստին: Բայց անիկա իրական է: Այս զգայութիւնը կ'արթննայ ձեր մէջ առաջին իսկ էջերէն: Հետզհետէ կը զօրանայ: Որքան որ հեղինակը մեղանչէ, այսինքն անիրական դէպքերու բանայ իր երեսները, դարձեալ մենք չենք զայթակղիր: Վկայ՝ Վահանի չուրջը ստեղծել ուզած իր հրաշալին: Նահատակ եկեղեցականներուն դիակները սպասող Պարսիկները ենթակայ կ'ըլլան գերբնական երեւոյթներու, առանց որ խոչոր հակասութիւններ, անկարելի բնազանցումներ վիրաւորեն մեր ողջմտութիւնը: Ահա այս թանկագին պաշտպանութիւնն է որ մինչեւ մեր օրերը դիմացուցած է այդքան նախնական գրելու ձեւի մը համն ու հրապոյրը:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ ՓԱՐՊԵՑԻԻՆ ՄՕՏ

Զ. դարուն սկիզբները, պատմութիւնը լատին ու հելլէն մշակոյթին մէջ կորսնցուցած է թէ՛ դասական, թէ՛ քրիստոնէական իր նկարագիրները: Բիւզանդական պատմութիւնը զգուշաւոր քրոնիկ մըն է, չէզոք կամ ներքինի:

Մեր մէջ փոխադրուածը այս վերջին ձեւը պիտի ըլլար: Արդարեւ դարով մը հազիւ կը զատուի Փաւստոս Բիւզանդը Ղազարէն: Բայց ուշադիր բաղդատութիւն մը կը հաստատէ վերի վարկածը: Բիւզանդ, աւելի մօտ դասականներուն, յաջողած է, տակաւին իր մէջ պահել հիներուն անկախ ու provocant դիրքը հանդէպ արքունիքներու: Իր պարսաւը տաք է ու բանաստեղծական: Փարպեցին կը գտնէ միջին մը որ քիչ քիչ հայ պատմագրութեան ընդհանուր կաղապարը պիտի դառնայ: Ու ահա քանի մը նկարագիրներ:

Փարպեցիին համար պատմութիւնը կրկին երեսներ ունի: Ամէնէն առաջ անիկա սրբազան զբաղում մըն է, դէպքերու ճչգրիտ յեռումէն աւելի՝ իր բարոյական նպատակներովը կենսական: Պրօպականտի լաւագոյն միջոց մը՝ որ աւելի զօրաւոր ու չահազրգիռ կը դառնայ մարդկային իրադարձութիւններու խռովքովն ու անոնց թանձրացեալ պատկերացումովը: Կեանքին մեծ տոամը՝ ենթարկուած հզօր, անհասելի դերակատարի մը նոյնքան անչափելի իմաստութեան ու տնօրինումին: Ասիկա մխիթարութիւն մըն է ու նոյն ատեն ապրելու հրաւէր մը: Փարպեցի իր ժողովրդական ամենախոր բնազդներէն կը քաղէ իր վարդապետութիւնը:

Ասկէց զատ պատմութիւնը տեսակ մը էրոնիկոն է, արձանագրութիւն եղելութիւններու որ գրական մտահոգութեամբ չի գար թուղթին: Կենսագրութեան տեսակ մը dégagé են, ուր դարձեալ գրագէտի յատկութիւններ չեն որ գերակչիռ կը մնան:



Անշուշտ, երբ գրագէտ մըն է որ կը փորձէ վերի կրկնակ ձեւերը, արդիւնքը խորապէս պիտի տարբերի կաղապարին պարտադրած անգոյն, անանձն, չէզոք տիպարէն: Դժբախտութիւն է որ մեզի պակսածը գրագէտը ըլլայ, այդ չրջաններուն, աւելի վերջերը ու գրեթէ միշտ:

Այսպէս է որ կը ստեղծուի հայ պատմագիրներու դպրոցը: Անիկա պիտի արձանագրէ, պիտի լայ, պիտի աղօթէ, պիտի խանդավառուի նահատակներու քաջութեամբը, պիտի արդարացնէ երկինքը ու պիտի չանդրադառնայ պատճառներուն որոնք մեր ժողովուրդը այսպէս խորտակեցին: Ճապէս ըսմանթիք, այդ պատմութիւնը զգուշութեամբ պիտի հեռանայ իրականութեան զննութենէն ու պիտի մխիթարուի Սուրբ Գիրքին համարները մեր արիւնին ու պատիւին գինովը ապացուցուած տեսնելու մեծ երջանկութեամբը: Ի՞նչ հարկ այս տրտում միջակութիւնը անգամ մըն ալ փաստելու: Բացէք որ եւ է պատմիչ ու էջ պիտի չանցնի առանց Ս. Գիրքի մէկ տողին:

Այդ պայմանագրութիւնը հեռուէն կամ մօտէն բաղդատելի չէ դասական գրականութեանց: Դարձեալ զուրկ է նոյն մատենագրութեանց քրիստոնէական առաջին շրջանի կարեւոր ստորագելիներէն: Ցեղային տարրը, տեղական գոյնը, դէպքերուն ու տրամին անմիջական, տեսանելի չահագրգռութիւնը, վերջապէս ամէն ինչ որ գործ մը մանաւանդ, ազգային կ'ընէ, իբր ձեւ ու բիւրեղացեալ յիշատակարան, գրեթէ միշտ պակսեցաւ մերիններուն:

Ու մեր պատմիչները կը պատմեն անիմաստ կամ անկարեւոր դէպքեր, խորունկ, աչխարհաւեր հետեւանքով եղելութիւններ, մեծ փլուզումներ կամ բախումներ նոյն անզգածութեամբ, նոյն չատախօսութեամբ (երբ եղելութիւնը կ'իյնայ կրօնական rayonին վրայ): Այս եղանակը տակաւ պիտի ընդհանրանայ: Ու դարերը պիտի յաջորդեն դարերուն, երկիրը պիտի տապլտկի աւելի խոչոր, խորունկ ու քայքայող տագնապներով. մեր պատմիչները պիտի չչեղին իրենց աւանդութիւններէն:

ՈՃԸ

Փարպեցիին ոճը հիւթեղ ու կտրուկ է գիրքին չատ մասերուն մէջ: «Արարատեան գաւառ»ին նկարագրութեան մէջ անիկա կը գտնէ երանգ, գնացք, պատկերելու կարողութիւն միջոցով մը որ անձնական կը կարծեմ: Հասնելու համար համադրական գրելու այդ ձեւին, պէտք պիտի ըլլար նախընթաց մեծ ու զարգացուն գրականութիւն մը ենթադրել: Անոր բարդումները մտածման կամ պատկերի արագ մերձեցումներ են, ճիշդ ինչպէս պիտի ընէ աւելի քիչ չափով մը Խորենացին, աւելի մեծ աստիճանով՝ Նարեկացին: Թուղթին մէջ այդ ոճը ամէնէն աւելի ի յայտ կը բերէ Փարպեցիին նկարագիրը, հանդարտ, զգուչաւոր ու գիտուն մարդը որ կիրքի մը, զօրաւոր ցնցումներու ազդեցութեամբ կրակ կը դառնայ: Ու անոր բառերը այդ յուզումներէն տաքցած՝ կը վազեն էջերէն: Պատմութեան մէջ այդ ոճը հանդարտ է նորէն երբ կը փորձէ մտածել, մեկնել: Ճիշդ վերի պայմաններով կը տաքնայ երբ իր անձնաւորութիւնները գերագրգռուած վայրկեաններէ կ'անցնին: Առհասարակ պատմումի (narration) համար դանդաղ է անիկա (եղելութիւնները անձերուն չափ տիրապետուած չեն Փարպեցիին): Գծագրութիւնը անկատար է իր մօտ, տրուած ըլլալով շրջանին ընդհանուր անփութութիւնը: Բայց չի կայ անոր կազմին մէջ տարտամ կամ կիսաստուեր մթնոլորտը, կամ վկայաբանական նուաղումները կամ նոյնիսկ րօմանթիք յարդարանքները որոնք Եղիշէի մը ոճը կը հագուեցնեն ի վնաս պատմական ճչգրտութեան կամ իրական կեանքին:



Անշուշտ արուեստագէտ չէ Ղազար, ինչպէս կը ներկայանայ Եղիշէ: Բայց իր պատմութիւնը այդ կողմէն ալ չահեկան կրնանք նկատել: Անձնական, երբեմն կծու, երբեմն յուզուած գործիք մըն է Փարպեցիին ոճը զոր չինած է հեղինակը քիչ մը այլամերժ փոյթով: Այս պարագան կը փրկէ պատմողին անունը, անջատելով զայն քրոնիկագիրներու տժգոյն երամէն: Գործին մէջ անոր կարողութիւններուն հաւատարիմ պահապանն է ան: Ոչ մէկ տեղ անիկա դաւած է հեղինակին: Ոչ մէկ տեղ վնասած է մանաւանդ, ինչպէս է պարագան յաճախ Եղիշէի համար:

ԼԵԶՈՒ

Փարպեցիի լեզուն ոսկեղարու հայերէն է: Պիրկ ու կշռաւոր: Քիչ տեղ կը մեղանչէ քերականութեան: Մութ հատուածները՝ աննշան: Անոր մէջ կան ժողովրդային տարրեր, այսինքն աչխարհաբարի յօրինուածքով նախադասութիւններ: Կարելի է հանդիպիլ արդի ձեւով յոգնակիներու, եթէ ասոնք գրչագրի վրէպներ չեն:

Ընդարձակ Տարեցոյց
Ս. Փրկիչ Ազգ. Հիւանդանոցի
(1927)

(«Ուրուագիծ Հայ Մատենագրութեան Պատմութեան»)

ԱԽԱՐԱՅՐԻ ՆԱՀԱՏԱԿՔ

Թէ ՀԱՅՐԵՆԵԱՑ պսակադիր
Գողթնի բնարբ լռեր են.
Երկնից թող գան անմահ հոգիք
Հայոց բաջերն պսակել:

Մասեաց գագաթ թող գան բազմին
Երկնից գունդ գունդ հրեշտակներ,
Աստուած իջեր ի Հայաստան
Հայոց արիւն հոտոտել:

Փախէք ամպեր Շաւարշանէն,
Ալ մի՛ ցօղէք ձեր ցօղեր.
Շաւարշանը ոռոգուած է
Հայոց բաջաց արիւնով:

Եւ կը ծլին ու կը ծաղկին
Այն դաշտին մէջ ոչ խոտ, վարդ.
Այլ Վարդանայ ինկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ հաւատ:

Քանդակագործ բաջն եղիշէ
Գրիչն ի ձեռ գայ յԱրտազ,
Զափէ, ձեւէ, գրէ, դրոշմէ,
Կեանք, մահ, հաւատք Վարդանայ:

Ա՛հ, Վարդանայ անուան արժան,
Մասիս կանգնէ մահարձան
Մենաստաններ, խաչն ի գմբէթ,
Աւետարան սուրբ տաճար:

Ծագէ արեւ բոյդ ճառագայթ,
Խաղտեաց լեռներ, մուք խորշեր.
Այն տեղ ինկաւ բաջն Հմայեակ,
Այնտեղ պառկեր ճահատակ:

Լուսին, լուսին, աչքովդ անքուն.
Պահէ հայոց ոսկորներ,
Եւ Մայիսի գուարթ ցօղով՝
Ցօղէ անոնց շիրիմներ:

Արծիւք, բազէք Հայաստանի,
Եւ արագիլք ամրան հիւր.
Դո՛ւք հսկեցէք այս աշխարհին,
Ժառանգեցէք հայոց տուն:

Մոխիրներու վրայ նստէք,
Աւերակներ շինէք բոյն.
Եւ ծիծեռնակ գայ ու երթայ
Մինչեւ հայոց գայ գարուն:

Գ.Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Աւարայրի Ոգու Նոր Փայլատակումը

481-484 Թուականներին՝

ՋՕՐ. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԸ

ՓՐՈՖ. ԱՐԱՄԱՅԻՍ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

1500 տարի առաջ, 481–484 թուականներին Հայաստանում նոր ուժով բռնկւում են ժողովրդա–ազատագրական մարտերը:

Աւարայրի ճակատամարտում պարսիկների կրած մեծ կորուստները եւ հայերին ընկճելու նրանց ճիգերի ձախողումը հակադրեց սասանեան բռնակալներին Հայաստանում ժամանակաւրոպէս կիրառել մեղմ քաղաքականութիւն: Սակայն Պէրոզ շահը 460–ական թուականներից սկսած նորից խստացնում է Հայաստանում կիրառուող քաղաքականութիւնը, ճնշումները, հարկահանութիւնը:

Հայ նախարարները խոհեմաբար պահպանում են իրենց զինուած ջոկատները, քաշւում լեռներն ու բերդերը, շարունակում տեղ–տեղ հարուածներ հասցնել պարսկական կայազօրներին: 481 թուականին պարսիկ զաւթիչների դէմ ապստամբութիւն է բարձրանում Վրաստանում: Վրաց թագաւոր Վախթանգ Գորգասալը, համախմբելով երկրի ռազմական ուժերը, նախ ճնշում է պարսկական կողմնորոշում ունեցող վրաց իշխաններին, յետոյ զէնքն ուղղում պարսիկների դէմ, նրանց դուրս քշում Վրաստանից:

Հայերը չտապում են արձագանգել վրաց ժողովրդի հերոսական պայքարին, օգնել նրան: Շիրակում գումարւում է Հայաստանի նախարարների գաղտնի ժողով, որը որոշում է Աւարայրի գլխաւոր հերոս եւ նահատակ Վարդան Մամիկոնեանի եղբօր որդուն՝ Վահան Մամիկոնեանին ընտրել սպարպետ, նրան յանձնարարել հայոց բոլոր զօրավարների ղեկավարութիւնը, ապստամբութիւն բարձրացնել պարսկական տիրապետութեան դէմ: Նախարարներ Գդիհոն Սիւնին, Գադիչօ Խորխոռունին եւ այլք վախենում են, խուճապի մատնւում, չտապում են պարսիկ մարզպանի հետ լուր տալ շահին եւ կանխել ապստամբութիւնը: Դաւաճան նախարարները եւ պարսիկ սատրապ մարզպանն ամրանում են Անիի եւ Արտաշատի միջնաբերդերում, սպասելով պարսկական զօրքերի գալուն:



Վահան Մամիկոնեանը դաստիարակուել էր իր հօրեղբօր՝ Քաջ Վարդանի օրինակով, իւրացրել նրա աւանդոյթները, անձնուիրութիւնը, հայրենասիրութիւնը, հայրենի մարտական ուժերը համախմբելու եւ կուռ բազուկ ստեղծելու կարողութիւնը: Նախարարների ժողովում Վահան Մամիկոնեանը խնդիր է դնում՝ կա՛մ համերաշխել պարսիկ մարզպանին ու նրան միացած հայ դաւաճաններին, կա՛մ ելնել մահու ու կենաց կռուի թշնամիների դէմ:

Հայրենասէր նախարարներն անարգում են դաւաճաններին եւ պաշտպանում Վահան Մամիկոնեանի ծրագիրը: Նախարարների ժողովը միահամուռ յայտարարում է՝ «Մեր հայրենիքի փրկութեան համար սրանից աւելի յարմար առիթ չկայ: Վրաստանի Վախթանգ թագաւորը քաջ մարդ է, միանալով վրացիների հետ, մենք կարող ենք դիմադրել պարսիկներին»: Հայաստանի բոլոր գաւառներում ծաւալւում է զինուած ապստամբութիւն սասանեան զաւթիչների դէմ:

Ապստամբները գառնում են երկրի տէրը: Սահակ Բագրատունուն ընտրում են մարզպան, իսկ Վահան Մամիկոնեանին՝ սպարապետ: Դուինը գառնում է մարզպանութեան կենտրոն: Ապստամբութեան մասնակից ազնուականների ընտանիքներն ու գանձերը նախօրօք փոխադրւում են անմատոյց վայրեր:

Սասանեանները եւ նրանց կողմնակիցներն աշխատում են ճնշել ժողովրդական

չարժումը զէնքի ուժով։ Ապստամբներից ճողոպրած Ատրվշնասպ մարզպանի հրամանատարութեամբ Հայաստան է ներխուժում եօթը հազարանոց մի բանակ։ Խուսափելով մարտի բռնուել Թշնամու հետ բաց դաշտում, հայեր այդ բանակը վարպետօրէն քաշում են դէպի Մասիսի լեռնալանջերը եւ Ակոռի գիւղի մօտ Վահան Մամիկոնեանի գլխաւորութեամբ ծանր պարտութեան մատնում նրան։ Հակառակորդի բանակի մնացորդները դիմում են փախուստի։ Մեծաթիւ սպանուածների մէջ են նաեւ մարզպան Ատրվշնասպն ու այլ զօրականներ։

Ակոռիի ճակատամարտի լուրը տարածւում է երկրով մէկ եւ արձագանգ գտնում բոլոր շրջաններում։ Ապստամբների շարքերը ստուարանում են. աշխարհազօրից բացի, նրանց են միանում մի քանի նախարարներ, որոնք մինչ այդ վարանում էին։

Ապստամբութիւնը ճնշելու համար Պէրոզը 482 թուականին Հայաստան է ուղարկում նոր, աւելի մեծ բանակ՝ Սալար զօրավարի հրամանատարութեամբ։ Վահան Մամիկոնեանը նախարարական զօրքերից ու աշխարհազօրայիններից բաղկացած մի բանակով չտապում է դիմակալելու Թշնամուն, որպէզի կանխի նրա հետագայ չարժումը դէպի երկրի խորքերը։

Հակառակորդ բանակները հանդիպում են Արտազ գաւառի (Մակուի շրջան) Ներսեհապատ գիւղի մօտ, Աւարայրից ոչ հեռու։ Հայկական զօրաբանակը Թշնամու գերակչռող զօրքի դէմ յարձակւում է երեք թեւով։ Կենտրոնում գործող զօրամասի հրամանատարը Սահակ Բագրատունին էր, աջ թեւում՝ Բաղէ Վահեւունին, իսկ ձախ թեւում՝ կամսարական եղբայրները։ Ընդհանուր հրամանատարն է Վահան Մամիկոնեանը։

Ճակատամարտը տեղի է ունենում 482 թ. Մայիսին եւ տեւում է մի ամբողջ օր՝ վաղ առաւօտից մինչեւ երեկոյ։ Հայկական այրուձին ու նրան միացած աշխարհազօրը կռւում են հերոսաբար։ Ճակատամարտն աւարտւում է ապստամբների կատարեալ յաղթանակով։ Հակառակորդի ծանր պարտութիւն կրած բանակը դիմում է փախուստի։ Հայկական զօրաբնակը հետապնդում է խուճապահար փախչողներին եւ վերցնում հարուստ աւար։ Ղազար Փարպեցին վկայում է, որ հակառակորդի բանակի տուած զոհերի թիւը «կինդանի մնացածներից աւելի է...» («Հայ ժողովրդի Պատմութիւն», խմբագրութեամբ Ակադ. Մ. Ներսիսեանի, Երեւան, 1972, էջ 173–174)։

Պարսից բռնակալը չի հաշտւում իր զօրքերի կրած ծանր պարտութեան հետ, նորից մեծ բանակ է ուղարկում՝ այս անգամ Վրաստանի դէմ։ Վրաց Թագաւոր Վախթանգ Գորգասալը դիմում է հայոց սպարապետ Մամիկոնեանին՝ օգնութիւն խնդրում։ Հայոց զօրքի մի մասը մեկնում է Վրաստան, կազմւում է հայ–վրացական միացեալ ճակատ։ Պարսկական բազմահազար զօրքը մի կողմից եւ վրաց–հայկական ուժերը միւս կողմից հանդիպում են Կուռ գետի ափին՝ Ճարմանայի հովտում։ Կատաղի կռիւներ են տեղի ունենում փոփոխական յաջողութիւններով։ Մարտում սպանւում են հայոց մարզպան, հայրենասէր իշխան Սահակ Բագրատունին, զօրավար Մամիկոնեանի եղբայրը՝ Վասակը եւ շատ ուրիշ քաջեր՝ հայերից ու վրացիներից։ Մարտում թափուած արեամբ սրբագործուեց հայ եւ վրաց ժողովուրդների մարտական բարեկամութիւնը։

482 թուականին Թիֆլիս քաղաքից հարաւ արեւելք ընկած դաշտում տեղի ունեցած այդ մարտերից յետոյ Վախտանգ Թագաւորը իր զօրագնդերը տարաւ դէպի իր երկրի խորքը, իսկ Վահան Մամիկոնեանը իր բանակը շարժեց դէպի Տայք, յետոյ Այրարատ։ Պարսից արքայ Պէրոզը սպանուել էր հոների դէմ մղուած կռւում։

483 թուականին պարսից նոր արքան, զօրավար Հազարավ ուխտի գլխաւորութեամբ, աւարառուների մի հոծ բանակ է ուղարկում Հայաստանի վրայ։ Պարսկական խաժամուժը հասնում է Արարատեան դաշտ, շրջապատում Դուինը։ Սպարապետ Վահան

Մամիկոնեանը ընտրում է իրեն յատուկ յարձակողական տակտիկա, ոչ թէ սպասում է թշնամու գրոհին, այլ իր զօրագնդերը յանկարծակի յարձակման է տանում Դուինը շրջապատողների դէմ, ճեղքում թշնամու զորասիւնը եւ ցրում նրա զինուորականներին: Դուինի տակ պարսկական բանակը լաւ ջարդ է ստանում:

Մէկ րոպէ անց, 484 թուականին, Տիզբոնից, Պարսից «արքայից արքա»ն Հայաստան է ուղարկում նոր զօրավար՝ Մհրա-Շապուհին: Վահան Մամիկոնեանի բանակը պատրաստ էր նորից մարտի բռնուելու գոռոզ թշնամու դէմ: Բայց այս անգամ պարսկական արքան եւ զօրապետը որոշում են Հայաստանի վրայ իրենց խարխլած իշխանութիւնը պահպանել եւ հայերի անվերջ ապստամբութիւններին վերջ տալ դիւանագիտական, խաղաղ միջոցներով: Հայաստան է ուղարկւում պարսկական դեսպանութիւն, որին ընդունում են Վահան Մամիկոնեանը եւ իր մերձաւոր նախարարները: Բանակցութիւններն աւարտւում են հաշտութեան պայմանագրով, որը կնքւում է 484 թուականի վերջերին, Նուարսակ սահմանային գիւղում: Նուարսակի հաշտութեամբ հայ նախարարները պահպանում էին իրենց անկախութիւնը, նրանց իրաւասութեանն էր թողնւում երկրի կառավարումը· քրիստոնէութիւնը պահպանւում է որպէս Հայաստանի պետական կրօն եւ արգիլւում քրիստոնեաների հալածանքները: Վահան Մամիկոնեանը ճանաչւում էր որպէս Հայաստանի տանուտէր եւ սպարապետ, ղեկավարելով երկրի պետական ու զինուորական գործերը՝ մինչեւ իր մահը՝ 510 թուականը: Այսպիսով, Վահան Մամիկոնեանը նոր փայլ տուեց Վարդան Մամիկոնեանի եւ Աւարայրի միւս քաջերի աւանդոյթներին, որպէս խելացի, շրջահայեաց, քաջ զօրավար չատ հերոսական էջեր գրեց հայոց ռազմական պատմութեան մէջ:

Վահան Մամիկոնեանի գլխաւորութեամբ մղուած ազատամարտերի յաղթական աւարտի մասին նշանաւոր պատմագիր Ղազար Փարպեցին արձանագրել է· «Մեծ ուրախութեան եւ ցնծութեան օր էր այդ ազնիւ ու հայրենասէր մարդկանց համար, եւ սուգի ու տխրութեան օր՝ անազնիւ ու չար մարդկանց, դաւաճանների համար»:

Հայոց ռազմական սխրագործութիւնները 5-րդ դարում նուաճեցին եւ ապահովեցին պայմաններ տնտեսական ու հոգեւոր զարգացման համար: Այդ ժամանակներում Մեսրոպ Մաշտոցն ստեղծեց հայ գիրը, կազմակերպուեցին հայկական դպրոցներ, լայնօրէն տարածուեց քրիստոնէութիւնը: Կառուցուեց Էջմիածնի Գրիգոր Լուսաւորչի տաճարը, որին կից հիմնադրուեց մատենադարան, այնտեղ սկսեցին հաւաքուել ու պահպանուել հայ ժողովրդին մշակոյթի արժէքները:



ՎԱՐԴԱՆ

ԻՄ ՀԱՅՐԵՆԵԱՑ հոգի Վարդան,
Հոգիս հոգւոյդ եղնի դուրպան.
Որ Տղմուտի ափերու բով,
Զարկիր, զարկուար, ինկար՝ բաջբաջ
Պարսիկ սփռած ի ձախ ու աջ.

Իմ հայրենեաց արեւ Վարդան,
Արեւս ար'ուստ եղնի դուրպան:

Աւետարանն ու խաչն առիր,
Տարիր երկինք բարձրացուցիր,
Եւ դուն ալ հետ թողիր գացիր,
Անուշ արեւդ հողին տուիր,
Որ հայրենեաց շողայ արեւ
Շաւարշանայ դաշտին վերեւ.

Իմ հայրենեաց արեւ Վարդան,
Արեւս ար'ուստ եղնի դուրպան



Արիւնդ կարմիր կարմիր թափուաւ,
Դաշտ ու ծաղիկ ներկուեցաւ.
Լուսնակն ելաւ ամպի տակից,
Պաղ պաղ թափեց ցօղիկն աչից,
Որ հայրենեաց վարդեր բացուին,
Պլպուլն երգէ դրախտի սարին.

Իմ հայրենեաց արեւ Վարդան,
Արեւս ար'ուստ եղնի դուրպան:



Ս. Հ. ՖԼԼԻԿԵԱՆ

ՆՈՒԱՐՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ԼԷՕ

Հեփթաղների հարուածների տակ Իրանն արագօրէն մօտեցաւ կործանման խորխորատին: Ամբողջ արեւելեան Իրանն ասպատակուեց: Ահագին կորուստներ պատճառեցին այդ արշաւանքները, որոնցով հեփթաղները փորձում էին անցնել դէպի արեւմուտք: Եւ պետութիւնը փրկելու համար դուրս է գալիս մի մարդ—Զառմիհր Հազարավուխտը, որին տեսանք Հայաստանում: Սա բարձր ծագում ունեցող մի ազնուական էր, մէկն Իրանի այն ժամանակուայ նշանաւոր «Փահլաւաններից»: Նա կարողանում է հաշտութիւն կնքել հեփթաղների հետ, պայմանաւորուելով տարեկան հարկ վճարել նրանց: Իսկ Պէրոզի տեղ թագաւորեցնում է նրա եղբայր Բալաշին (484–488): Փարպեցին սրան Վաղարշ է անուանում եւ ասում է, թէ «բարերար եւ հեզ» էր այս Վաղարշը: Իսկ այս նշանակում է, թէ Վաղարշն այն Սասանեաններից էր, որոնք չէին ուզում մոգերի եւ ազնուականութեան կոյր գործիք դառնալ, ուստի եւ հալածանքներ չէին հանում պետութեան այլակրօն հպատակների դէմ: Այսպիսի մի թագաւոր հարկաւոր էր մանաւանդ այս կործանման ժամին, որպէսզի կարողանար հաշտեցնող ու մեղմ քաղաքականութեամբ վերջ դնել ներքին խռովութիւններին: Պետական կարեւոր խնդիրներից մէկը Զառմիհրը դարձնում էր հենց հայոց հարցը: Վաղարշի թագաւորութեան երկրորդ օրն իսկ խօսք բաց անելով Հայաստանի մասին, Հազարավուխտը եւ նրա յաջորդ Շապուհ Միհրանեանը մանրամասն զեկուցում տուին թագաւորին, բացատրելով, որ Պէրոզի անձնահաճ բռնակալութիւնն է եղել հայոց ապստամբութեան պատճառը, որ Վահան Մամիկոնեանը կռուել է պարսից իշխանութեան դէմ մեծ քաջութեամբ, եւ այս բոլորի հետեւանքն այն է, որ այսօր Հայաստանի պէս մի մեծ եւ օգտակար աշխարհ դուրս է եկել պարսից տիրապետութեան տակից: Խորհրդակցութիւնը յանգում է այն վճռին, թէ պէտք է հաշտեցնող, սիրաշահող քաղաքականութեամբ նորից նուաճել հայերին, իսկ դրա համար պէտք է լսել նրանց զանգատներն ու պահանջները, զիջողութիւններ անել, մի անգամից ճեռք վերցնելով զրադաշտականութիւնը բռնի միջոցներով տարածելու մտքից: Թագաւորի լիազօրութիւններով օժտուած մի ամբողջ բազմամարդ դեսպանութիւն է ուղարկւում Հայաստան: Դեսպանութեան գլխաւորն էր Նիխոր Վշնասպդատը, «այր հեզ եւ մտացի եւ աշխարհաչէն», ինչպէս անուանում է նրան մեր Փարպեցին: Քարտուղարն է Շապուհը, «Խորհրդեան ղպիր»: Կային եւ ուրիշ ազնուական եւ բարձրաստիճան պաշտօնեաներ, նրանց հետ էր եւ մի զօրագունդ: Զգուշութեան համար Նիխորի հրամատարութեան էին յանձնւում Ատրպատականի եւ Զարաւանդի ձիաւոր զօրքերը: Նիխորին տրուած էր հրահանգ՝ հաշտեցնել հայերին Պարսկաստանի հետ: Օրուայ դրութիւնն էլ այդ էր պահանջում: Պէրոզի որդի Զարեհը գահաժառանգութեան վէճ էր սկսել, եւ նորից բորբոքուել էր ազգամիջեան պատերազմը, իսկ հեփթաղների արշաւանքը բոլորովին դատարկել էր արքայից արքաների գանձարանը, ոչ նոր զօրքեր կարելի էր հաւաքել, ոչ էլ առհասարակ գահի հեղինակութիւնը պահպանել: Շատ կարեւոր էր համարւում հայերի օգնութիւնը, որը միայն կարող էր Վաղարշի թագաւորութեան նեցուկը դառնալ:



Նիխորն սկսեց իր առաքելութիւնը քաղաքագիտական ներքին զգուշութիւններով, աշխատելով ամէնից շատ չգրգռել հայերի կասկածամտութիւնը եւ չվիրաւորել նրանց ազգային զգացմունքները: Այս պատճառով էր, որ նա նոյնիսկ չկամեցաւ մտնել հայոց միջնաշխարհը եւ բանակցութիւններ սկսել քաղաքական կենտրոնում, որ Դուինն էր: Ուստի գալով Հեր գաւառը, նա կանգ առաւ Նուարսակ գիւղում եւ այդտեղից էլ իր առաջարկներն ուղարկեց Վահանին՝ Դուին: Պատգամախօսներ էին դեսպանութեան

քարտուղար Շապուհը եւ Միհր-Վչնասպ ճուարչացին: Սրանք, ներկայանալով հայոց զօրավարին, յայտարարեցին Նիխորի կողմից, թէ նա թագաւորից հրովարտակ ունի հայերին հաչտեցնելու մասին, ուստի հրաւիրում էր նրան իր մօտ բանակցելու եւ պայմաններ որոշելու համար:

Այս առաջարկութիւնը, իհարկէ, մեծ ուրախութիւն է պատճառում հայոց մայրաքաղաքի մէջ: Այսպիսի մի երեւոյթի Հայոց աշխարհն առաջին անգամն էր ականատես լինում: Պարսից կառավարութիւնը, հաչտութեան բանակցութիւններ սկսելով հայ ապստամբների հետ, նրանց, այսպիսով, կռուող կողմ էր ճանաչում: Բայց այդ անակնկալ յաջողութիւնը չպտտեցրեց Վահանի ու նրա ընկերների գլուխները: Հայոց քաջարի զօրավարը ինչպէս մեծ արժանապատուութեամբ իրեն պահել էր երեքամեայ մաքառումների միջոցնին, այնպէս էլ այժմ էր իրեն ցոյց տալիս, առանց յղփանալու իր քաջութեան պտուղներով եւ հպարտութեան հովեր առնելու, ինչպէս նաեւ առանց ոգեւորուելու եւ պարսից պաչտօնեային հաճոյանալու համար նրա առաջարկները վազեվազ կատարելու: Վահանը լաւ պատիւներ առաւ Նիխորի պատգամաւորներին, իսկոյն չպատասխանեց նրանց, այլ դեռ խորհուրդի կանչեց իր հաւատարիմ զինակից նախարարներին: Հայերի համար իսկապէս կարիք էլ չկար իրենց պահանջները նոր ձեւակերպելու: Արդէն Միհրանի հետ բանակցելիս, ինչպէս տեսանք, Վահանը մանրամասնաբար գրել էր հայ նախարարութեան դժգոհութիւնները, թէ ի՛նչն է ապստամբութեան իսկական պատճառը եւ թէ ի՛նչ պայմաններով ապստամբները կը համաձայնէին նորից հնազանդուել պարսից կառավարութեան: Այդ նոյն պահանջներն էլ այժմ նախարարական խորհուրդը ձեւակերպում էր երեք կէտերի մէջ, եւ Վահան Մամիկոնեանը, ուղարկելով այդ կէտերը Նիխորին, յայտնում էր, որ ինքը կը գնայ նրա մօտ միայն այն դէպքում, եթէ պարսից կառավարութիւնը ստորագրի եւ կնքի պայմանները: Ահա թէ ի՛նչ էր պահանջում այդ կէտերի մէջ.

1. Հայերին թողնել իրենց հայրենի եւ բնիկ օրէնքը (կրօնը). հայ մարդուն մոգ (զրադաչտական) չդարձնել եւ հաւատափոխութեան համար պարգեւներ ու աստիճաններ չտալ: Ատրուչանները հեռացնել Հայոց աշխարհից եւ չթոյլ տալ, որ ուրացող եւ վատ մարդիկ անարգեն ու թշնամանեն հայոց եկեղեցին: Քրիստոնէութիւնն ազատ եւ համարձակ պաչտուի ամէն տեղ: 2. Մարդկանց ճանաչել ոչ թէ իշխանաւորի քմահաճոյքով, այլ արդարութեամբ որոշել ու վատը, պիտանին եւ անպիտանը: Լաւերին եւ օգտակարներին վարձատրել եւ առաջ քաչել, իսկ վատերին եւ անպիտաններին արհամարհել: Իմաստուն մարդկանց խորհրդով բան տեսնել եւ անմիտներին մօտ չթողնել եւ հալածել: 3. Արեաց աշխարհի տէրը (թագաւորը) պէտք է տեսնի ամէն ինչ իր աչքով, լսի իր ականջով եւ խօսի իր բերանով: Միջնորդներ նրա եւ հայ ժողովրդի միջեւ չպիտի լինեն. ուրիշների աչքով չպիտի տեսնի նա, եւ ուրիշների ականջով չպիտի լսի, ուրիշի խօսքով չպիտի ճանաչի լաւ եւ անդաւ մարդկանց ու ուրիշի բերանով չխօսի ինչ հարկաւոր է, այլ ինքը լինի վերահասու, անմիջական յարաբերութիւններ ունենայ մարդկանց հետ:



Այս պայմանները Նիխորին տալու եւ նրանից պատասխան ստանալու համար Վահանն ուղարկում էր, եկած պատգամաւորների հետ, եւ իր ներկայացուցիչներին, որոնց ընտրել էր իր ուխտակից նախարարներից: Դրանք էին՝ Հաչկուր Արծրունի, Սահակ Կամսարական, Վասաւուրտ Կարքային, Առաւան Աղբեւրկացի եւ Պաճակ, որ Մարդպետական գնդից էր: Նիխորը մեծ պատուով ընդունեց այդ հայ պատգամաւորներին, ընդունեց նաեւ նրանց բերած պայմանները եւ հրաւիրեց Վահանին գալ իր մօտ անձնական տեսակցութեան: Հայոց սպարապետն անցաւ Արաքսի միւս ափը, բայց չմոռանալով, որ գործ ունի պարսիկների հետ, ուղիղ Հեր գաւառը չգնաց, այլ կանգ առաւ Արտազ գաւառի Եղինդ գիւղում, նորից մարդ ուղարկեց Նիխորի.մօտ

եւ պահանջեց, որ նա նշանաւոր պարսիկներից պատանդներ տայ, որոնք կը մնան հայերի մօտ մինչեւ իր վերադարձը: Գոռոզ պարսիկներն այս պահանջն էլ ստիպուած էին կատարել: Պատանդներն էին՝ Բազեն, որ «Ատրպատականի Շահապ» էր (Ատրպատականի կառավարիչ), Վեհ-Վեհնամը, որին ապստամբութեան սկզբին տեսանք հազարապետի պաշտօնով հայոց աշխարհում, եւ Միհրանի եղբայր Ներշապուհը: Սրանք յանձնուեցին Ներսեհ Կամսարականին: Միայն այս զգուշութիւններից յետոյ էր, որ Վահանը գնաց Նուարսակ, ունենալով իր հետ մեծ շքախումբ եւ մի զօրագունդ: Նիխորը դիմաւորեց նրան յատուկ պատուիրակների միջոցով: Վահանը, մօտենալով պարսկական բանակին, զինուորական փողեր հնչեցնել տուեց եւ սրանով չափազանցութիւն եւ անբաւականութիւն պատճառեց պարսիկներին: Նիխորը նորից մարդ ուղարկեց ազդարարելու Վահանին, թէ Արեաց բանակը փողեր հնչեցնելով մուտ գործել կարող է միայն Արեաց զօրքերի հրամանատարը: Վահանն արժանապատուութեամբ պատասխանեց, որ իրեն շատ լաւ յայտնի է այդ կարգը, բայց ինքը դեռեւս պարսից հպատակ չէ եւ պահում է իրեն իբրեւ մի անկախ մարդ, որ պարտաւոր չէ հպատակուել պարսկական կարգերին:

Նիխորի մօտ Մամիկոնեան իշխանը մնաց մի քանի օր: Արքայից արքայի լիազօրն ամէն ինչ անում էր հայ ապստամբութիւնը սիրաշահելու, յարգանքի ցոյցերով գրաւելու համար: Տեղի ունեցան հրապարակական ընդունելութիւններ. երկու կողմերը համամիտ էին Պէրոզի գործը գնահատելու մէջ թէ՛ Նիխորը եւ թէ՛ Վահանը ճառեր արտասանեցին, որոնց մէջ պարսից կառավարութիւնն ընդունում էր հայոց պահանջների իրաւացիութիւնը, իսկ Վահանն աւելի եւս ընդարձակում էր իր տեսութիւններն ու հայեացքները, որոնք մեզ արդէն ծանօթ են: Իր կատարեալ յաղթանակի օրերին հայկական ապստամբութիւնը լիուլի վրէժ էր հանում հայ ուրացողներից, որոնք գտնուում էին Նիխորի բանակում: Այդ մարդիկ, Վահանի պահանջով, հեռուից նայողի դիրքում մնացին եւ իրաւունք չունեցան մասնակցելու այն մեծ ճաշկերոյթին, որ տուեց Նիխորն ի պատիւ Վահանի:

Համաձայնութեան մանրամասնութիւնները մշակուեցին Նիխորի եւ Վահանի միջեւ անձամբ, առանձին տեսակցութեան ժամանակ, որ տեղի ունեցաւ առանց վկաների ներկայութեան: Նիխորը պարսից կառավարութեան կողմից պաշտօնապէս ընդունում էր հայերի ձեւակերպած երեք պայմանները, բայց իր կողմից էլ պայման դրեց, որ անյապաղ վերականգնուի հին սովորութիւնը, եւ հայրերը հեծելազօր ուղարկեն արքունի դուռը, ուր այդ գունդը հարկաւոր է մանաւանդ այժմ՝ Զարեհի դէմ կռուելու համար: Այս պայմանը Վահանը կատարեց Դուին վերադառնալուց անմիջապէս յետոյ: Հայոց հեծելագունդը, որ գնաց Պարսկաստան, գտնուում էր Վրէն Վանանդացու հրամանատարութեան տակ, իսկ Վրենի օգնական էր կարգուում Մամիկոնեան մի նոր, երիտասարդ հերոս—սպանուած Վասակի որդի Գրիգորը: Այս գունդը Պարսկաստանում քաջութեամբ գործեց: Նրա միջոցով էր, որ Վաղարշը վերջնականապէս ջարդեց Զարեհի զօրքը եւ նրան բռնելով, մորթել տուեց հրապարակում:

«Երկերի ժողովածու» Բ. հատոր
Երեւան, 1967

ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՅ

Լռեց:— Ամպերը եկան ծածկեցին·
Երկինքն ու լուսինն աչքէս խլեցին·
Մնացի մինակ հոգիս վրդովուած,
Ձեռներս ծոցիս, գլուխս բարշ արած:



Եւ այնուհետեւ ամէն իրիկուն,
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն,
Նրա տխրամած դէմքը նայելիս,
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս:

Ա՛խ, ցոլա՛, փայլէ տխրադէմ լուսին,
Գուցէ հու փայլից փայլ տաս եւ հայիս:



Պատմէ շատերուն Վարդանի մահը
Կամ ինչպէ՛ս կորաւ հայ ազգի գահը·
Կամ ինչ վեհ սիրով սիրում էր Վարդան,
Մայրենի հողը – աշխարհ Հայաստան:

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

ՆՈՒԱՐՍԱԿԻ 484 Թ.Ի ԴԱՇԻՆՔԸ ՀԱՅՈՑ ԵՒ ՊԱՐՍԻՑ ՄԻՋԵՒ
- 1500եակին առթիւ -

ԱՐՏԷՆ Ա. ՓՀՆՑ. ԱՇՃԵԱՆ

Նուարսակ գիւղին մէջ –Հայաստանի եւ Պարսկաստանի սահմանին մօտ, Հեր գաւառ, Ուրմիոյ լիճին հիւսիսը– 484ին դէմ առ դէմ եկած էին Պարսից Վաղարշ թագաւորի ներկայացուցիչ Նիխոր դիւանագէտը, եւ Հայոց ուխտապահ քրիստոնեայ զօրքի սպարապետ Վահան Մամիկոնեանը՝ որդի Վարդան Մամիկոնեան զօրավարի Հմայեակ նահատակ եղբօր: Պատմիչը՝ այդ գիւղին մէջ սկսած եւ Պարսից արքունի Դռան մէջ եզրափակուած բանակցութեանց, Ղազար Փարպեցին է: Իր Պատմութիւն Հայոցը Ղազար Փարպեցի կը վերջացնէ օրուան Հայոց Կաթողիկոս Յովհաննէս Ա. Մանդակունիի գոհաբանական ուղերձով, խօսուած Հայոց ոստան Դուինի կաթողիկոսանիստ եկեղեցիին մէջ, զօրավար Վահան Մամիկոնեանի իբր Հայոց նոր մարզպան Պարսկաստանի, եւ «քնիկ ծառայի»· արքայազուրկ Հայաստանի ուխտապահ զինուորներուն միջեւ:

Այդպէս կը փակուէր Հայոց պատմութեան Ե· Դարու երկրորդ կիսուն արիւնոտ մէկ էջը, մօտ երեսուն հինգ տարիներու պայքարէ մը ետք ի խնդիր կրօնքի ազատութեան եւ մարդկային իրաւանց, պայքար «քնիկ տիրոջ», այսինքն կրակապաշտ Պարսկաստանի, եւ «քնիկ ծառայի» արքայազուրկ Հայաստանի ուխտապահ զինուորներուն միջեւ:

Պարսիկները փորձած էին Հայերը –եւ ասոնց միջոցաւ Վրացիներն ու Աղուանները– քաղաքական տեսակէտէ իրենց հաւատարիմ պահել, կրակի պաշտամունք պարտադրելով անոնց: Աւարայրի ճակատամարտը, որու ընթացքին ինկաւ Հայոց զօրավար Վարդան Մամիկոնեան –Պարսից Յազկերտ թագաւորին իսկ վկայութեամբ «վաստակաւոր եւ պիտանի ծառան մեր քաջ Վարդան»–, ռազմական տեսակէտէն եղաւ պարտութիւն մը ուխտապահ Հայոց համար, սակայն քաղաքական տեսակէտէն ի դերեւ հանեց Պարսից արքունիքին ծրագիրները իրեն հարկատու Քրիստոնեայ ազգերու հաւատարմութեան խնդրին մէջ: Պարսից վճիռով նահատակութեամբ պատժուեցան Հայ Եկեղեցւոյ կրօնապետ Յովսէփ Կաթողիկոս, անոր աջակից Ղեւոնդ Երէցն ու մի քանի հոգեւորականներ եւս, որպէս Հայ զօրքը Պարսից դէմ ապստամբեցնողներ: Հայաստանէն հեռու տարագրուեցան ուխտապահ Հայ նախարարներէն անոնք որոնք գերի ինկան Պարսից ձեռքը, իսկ ցիրուցան դարձած Հայ մարտիկները փոքր խումբերով տարիներով չարունակեցին կռուիլ թիւով գերազանց Պարսիկ բանակներու դէմ, Մամիկոնեան թէ կամաարական զօրագլուխներու առաջնորդութեամբ: Այդ զօրագլուխներէն ամենէն ճարտարը, Քրիստոնէական հաւատքով, հայրենասիրութեամբ, քաջութեամբ եւ արժանապատուութեան գիտակցութեամբ օժտուածն էր Վահան Մամիկոնեան: Երեք տասնեակ տարիներ Պարսից Դուռը գործածեց զէնքերու եւ տրորող փիղերու սարսափը, նենգութիւն եւ քսութիւն, ապստամբ հայերը ծունգի բերելու, եւ չյաջողեցաւ: Ռազմական ընդհարումներէն մէկուն առթիւ, Վահան Մամիկոնեան դասալիք մարտիկներու փախուստին հետեւանքով մնացած էր լոկ երեսուն կամ քառասուն քաջարի Հայ զինուորներով, որոնք իր խրախոյսով յարձակեցան հարիւրապատիկ թիւով գերազանց Պարսիկ բանակի մը վրայ եւ անոր մէջ ահ ու սարսափ տարածեցին:

Մինչ այդ, Պարսից ինքնահաւան եւ կամակոր կայսր Պերոզ կը յամառէր Հեփթաղներու դէմ արշաւանքի մը երթալ, արհամարհելով խաղաղութեան դաշինքը որ գոյութիւն ունէր երկու ազգերուն միջեւ: Պերոզ պարտուեցաւ եւ սպանուեցաւ: Պարսից գահը ժառանգեց Պերոզի եղբայրը Վաղարշ, «այր բարերար եւ հեզ»: Վաղարշի



քաղաքականութիւնը Հայ ապստամբներուն հանդէպ եղաւ «քաղցրութեամբ եւ սիրով նուաճել» զանոնք: Այդ հաշտարար մօտեցումով եւ Վահան Մամիկոնեանի անդրդուելի հաւատքին եւ իմաստուն ռազմավարութեան չնորհիւ կայացաւ Նուարսակի համաձայնութիւնը:

Վահան Մամիկոնեան կը նկարագրուի Ղազար Փարպեցիէն որպէս «այր մտացի, առողջախորհուրդ եւ բարեսէր· յոր գործ եւ ձեռն արկանէր գործել՝ Տէր յաջողէր ի ձեռս նորա եւ զօրանայր:» Արքունի Դռնէն ղրկուած գործակալներն անգամ զայն կը սիրէին եւ կը պատուէին: Անոնք Պարսից Թագաւորի ներկայութեան կը «գովէին լաւութիւն»ը այս մարդուն: Պերոզ Թագաւորն իսկ ի վերջոյ «պատիւ արժանի» կը համարէր ապստամբ Վահան Մամիկոնեանը:

Ահա այսպիսի հակառակորդի մըն էր որ Պարսից Վաղարշ Թագաւորի ներկայացուցիչ Նիխոր, գալով հայկական հողէ ներս երկու պատգամաւորներ ղրկեց անոր բանակատեղին, յայտնելու Վահան Մամիկոնեանին թէ ինք՝ Նիխոր հրովարտակ մը բերած է Վաղարշ Թագաւորէն, «զձեզ խաղաղութեամբ նուաճելու» մտքով, եւ հրաւիրեց Վահան Մամիկոնեանն ու անոր հետեւորդները որ գան, լսեն հրովարտակի պարունակութիւնը, եւ «ընտրեն ինչ որ բարի է»:

Վահան Մամիկոնեան զիչեր մը սպասցուց Նիխորի պատգամաւորները, եւ որպէս զի վստահ լինին իր հրամանատարութեան ներքեւ կռուող ուխտապահ նախարարներն եւ այրուձին թէ զաղտնի բանակցութեանց պիտի չձեռնարկէր ինք, հրամայեց Հայ զինուորներուն իր մօտ հաւաքուիլ, եւ բոլորին ի լուր բարձրաձայն կրկնել տուաւ Պարսիկ պատգամաւորներուն բերնով, Վաղարշ Թագաւորի եւ Պարսիկ աւագանիին Հայոց ուղղած պատգամը:

Յաջորդ օր, Վահան Մամիկոնեան իր զինակիցներուն հետ խորհրդակցելէ ետք ատեան կազմեց, ուր ներկայ եղան Նիխորի պատգամաւորները, եւ անոնց միջոցաւ հետեւեալ երեք պահանջները հաղորդեց Նիխորին·–



1· Հայերս թողէ՛ք մեր հայրենի եւ բնիկ օրէնքին մէջ: Ոեւէ Հայ մարդ մի՛ վերածէք մոգի: Ատրուշաններ վերցուցէ՛ք Հայաստանէն, եւ թոյլ մի՛ տաք որ անպիտան մարդիկ եկեղեցին անարգեն: Արտօնեցէ՛ք որ Հայ մարդիկ իրենց քրիստոնէութիւնը համարձակ եւ աներկիւղ պաշտեն ուր որ կամենան:

2· Պարսից երկրի գործերու յաջող ընթացքին ի սէր, զատորոշեցէ՛ք ձեր լաւը վատթարէն, պիտանին՝ անպիտանէն: Գնահատեցէ՛ք այն որ պատուական, քաջ եւ օգտակար է, եւ արհամարհեցէ՛ք եւ առ ոչինչ համարեցէք վատն ու անպիտանը: Սիրեցէ՛ք վաստակաւորը, ձեզի մօտեցուցէք իմաստուն խորհրդատու, իսկ անմիտները հրապարակէն հալածեցէ՛ք:

3· Պարսից Թագաւորը իր իսկ աչքերով եւ ականջներով պէտք է ստուգէ խնդիրներու իսկութիւնը, եւ պէտք չէ դատէ սուտ խօսքերու հաւատալով: «Այն Թագաւորը որ իր առողջ աչքերովը կը նայի եւ աննախանձ լսողութեամբ մտիկ կ'ընէ եւ արդար խօսքերով կը խօսի իր ծառաներուն հետ, կ'ունենայ կենսունակ ծառաներ որոնք չեն ճանճրանար աշխատանքէ, այլ առաւել եւս աշխատելով կը ջանան բարին աճեցնել· այդ կերպով ո՛րքան կը չէննայ երկիրը, եւ այդ երկրին տէրը ամէն օր կը չքեղանայ եւ կը պայծառանայ»:

Վահան Մամիկոնեան պահանջեց որ Պարսիկ պատգամաւորները Նիխորին յայտնեն թէ վերոյիշեալ պահանջներու ընդունման մասին գրաւոր եւ կնքուած պատասխան պէտք է տրուէր ուխտապահ Հայոց: Պատգամաւորներուն Նիխորի մօտ վերադարձին առթիւ Վահան իր ուխակիցներէն հինգ հոգի ընկերացուց անոնց: Նիխոր ուրախութեամբ ընդունեց Հայ պատգամաւորները, զանոնք մեծարեց ընթրիքով, ի

մեծ յուսախաբութիւն Նիխորի ատեանին մէջ տեղ գտած հաւատուրաց Հայերուն: Լսելով երկու Պարսիկ պատգամաւորներու տուած զեկոյցը Վահան Մամիկոնեանի երեք պահանջներու մասին, Նիխոր չքմեղանք գտաւ Վահան Մամիկոնեանի վրայ, պատահած ապստամբութեան պատճառ ցոյց տալով Պերոզ թագաւորի «չար բռնութիւնը», եւ մաղթեց որ աստուածները իրեն չնորհեն տեսնելու այն «օրը երբ Վահան իմ միջոցաւ նուաճուած, պիտի հնազանդի ծառայելու Պարսից»:

Նիխոր նամակ գրեց Վահան Մամիկոնեանին, վստահեցնելու զայն թէ Պարսից թագաւորն ու աւագանին լիովին գոհացում պիտի տան Վահանի պահանջներուն, եւ հրաւիրեց Վահանը որ փութայ գալ իր մօտ:

Վահան Նիխորի գրաւոր պատասխանը ստացաւ Պարսիկ պատգամաւորներու ձեռքով, եւ տեղեկացաւ թէ ինչպէս սիրով մեծարեց Նիխոր Հայ նախարարները: Ճամբայ ելաւ իր գունդով, որու անդամները այլեւս տեղեակ բանակցութեան արդիւնքին, «կամաւ եւ ցնծալից սրտով կ'երթային Նիխորի մօտ:» Արտազ գաւառը հասնելուն, Վահան Մամիկոնեան իր գունդին հետ կանգ առաւ եւ խօսնակ ղրկեց Նիխորին, յայտնելու թէ մօտեցած է, եւ ապահովութեան համար «աւագ Պարսիկներ եւ ականաւոր տոհմերու» պատկանող ներկայացուցիչներ ուզեց, անձեր որոնք պէտք էր մնային Հայ զօրքի հսկողութեան ներքեւ Վահանի եւ Նիխորի տեսակցութեան միջոցին: Նիխոր անվարան ղրկեց ութ բարձրաստիճան Պարսիկներ, որոնց ժամանումին Վահան Մամիկոնեան ուրախութեամբ ընդունեց զանոնք· յաջորդ օր յանձնեց զանոնք իրեն հաւատարիմ մարդոց, հրամայելով որ պատիւով վարուին պատանդներուն հետ: Վահան Հայ զինուորներու գունդ մը հետը առած, մօտեցաւ Նուարսակ գիւղին ուր Նիխոր կը սպասէր իրեն, պատուիրած ըլլալով Հայ զինուորներուն ընթանալ այնպէս ինչպէս պիտի ընթանային պատերազմի երթալու պահուն: Որոշ կէտի մը Վահան հրահանգ տուաւ Հայ զօրքին հնչեցնել պատերազմական փողերը: «Հնչող փողերու ձայնի սաստկութենէն երկիրը կը թնդար· որու վրայ Նիխորի զինուորները զարհուրած, կարծեցին թէ Վահան Մամիկոնեան խաբէութեամբ եկած է իրենց վնասելու, եւ ոչ թէ սիրով եւ խաղաղութեամբ հպատակելու»: Նիխորի կողմէ Վահանը դիմաւորելու ղրկուած աւագները Վահանին բերին դիտողութիւն մը՝ Պարսկական բանակատեղիին մէջ ուր այլեւս կը գտնուէին Վահան Մամիկոնեան եւ իր զինուորները, միայն Պարսից սպարապետը իրաւունք ունէր փող հնչեցնելու: Հպարտ Վահան Մամիկոնեանի տուած պատասխանը յատկանշական է.– «Նախ զիս ծառայ ըրէ Պարսից Տիրոջ, եւ ապա առանց քեզմէ սորվելու գիտեմ Պարսից երկրի պատշաճութիւնները· զիս մոռացկոտ մի՛ համարեր, քանի որ չատոնց չէ որ հեռացած եմ ձեզմէ»:



Յաջորդ արեւածագին Վահան Մամիկոնեան եկաւ Նիխորի ատեանը, իր ուխտակից նախարարներով: Ողջագուրումով եւ «ցնծալից ուրախութեամբ» ընդունեց Նիխոր Հայոց սպարապետը, փոխանցեց անոր Պարսից Վաղարշ թագաւորի եւ աւագանիին ողջոյնը, եւ «յոյժ սիրով, մի ըստ միոջէ» ողջունեց Հայ նախարարները եւ հայ զօրագունդի բոլոր անդամները, աւագ թէ կրտսեր: Հայ եւ Պարսիկ զինուորներ տեղ գրաւած ատեանին մէջ, լսեցին Նիխորի եւ Վահանի յայտարարութիւնները: Տեղի ունեցաւ ընթրիքով ընդունելութիւն: Նիխոր եւ Վահան չարունակեցին իրենց բանակցութիւնը առանձին, յաջորդ օրերուն, եւ Վահան յիշեցուց Նիխորին թէ անոր նամակով Հայոց խոստացուած իրաւունքները պէտք է Պարսից թագաւորին կնիքով հաստատուէին:

Մինչ այդ, Նիխոր յանկարծ լուր ստացած ըլլալով որ Պարսից Վաղարշ թագաւորի եղբօրորդին ապստամբած է, յայտնեց Վահանին թէ հարկադրուած է վերադառնալ արքունիք, եւ թելադրեց Վահանին որ ի նշան հաւատարմութեան, Հայ զօրագունդ մը ղրկէ Պարսկաստան կռուելու Վաղարշի հաւատարիմ բանակի կողքին: Վահան կազմեց Հայոց այրուձիէն գունդ մը, որու հետ Պարսից Դուռը ղրկեց իր նահատակ

եղբօր Վասակ Մամիկոնեանի որդին Գրիգորը: Ինք վերադարձաւ Հայոց մայրաքաղաք Դուին, չնորհակալութեան պատարագը մատոյց Աստուծոյ, եւ ըստ իր սովորութեան պատարագին առթիւ աղքատներուն ողորմութիւն տուաւ, եւ ապա ուրախութիւն սարքեց:

Վաղարշ թագաւորի եղբօրորդւոյն ապստամբութիւնը չուտով ճզմուեցաւ, եւ Վահան Մամիկոնեան իր բոլոր ուխտակից նախարարներով եւ այրուձիով ճամբայ ելաւ դէպի Պարսից Վաղարշ թագաւորի Դուռը: Վաղարշ յսելէ ետք Վահան Մամիկոնեանի բացատրութիւնները, հրապարակաւ յայտնեց թէ ներած է Հայոց՝ իրենց գործած ապստամբութեան համար «զոր Պերոզի բռնութեան պատճառաւ գործած էին»: Հայ ուխտակից նախարարներուն ուղղելով խօսքը, Վաղարշ յայտարարեց թէ «ինչ որ խօսեցաւ մեր առջեւ՝ ձեր Վահանը, ձեզի թող տրուի մեր դիրով եւ կնիքով ամէն ձեր խնդրածները, այսօրուանէ մինչեւ յաւիտեան»: Հայ ուխտապահ նախարարներն ալ թագաւորէն ստացան իրենց պատչաճ պատիւներն ու իրաւունքները, «ըստ անձին արժանաւորութեան»:

Վաղարշ թագաւորէն խաղաղութեամբ հրաժեշտ առնելով Վահան Մամիկոնեան եւ իր հետեւորդ ուխտապահ նախարարները վերադարձան Հայաստան, ուր դիմաւորուեցան հանդիսաւոր կերպով Յովհան Մանդակունի կաթողիկոսէն, խաչի նշանով եւ Ս. Գրիգոր «ճգնազգեաց նահատակի նչխարներով», եւ ստացան հայրապետին ողջոյնն ու օրհնութեան համբոյրը: Վահան Մամիկոնեան Դուին հասնելէն առաջ գնաց Վաղարշապատ, ուր օրերով իր ուխտը եւ նուիրատուութիւնը կատարեց Կաթուղիկէ սուրբ եկեղեցիին –իմա՝ Ս. Էջմիածին– մէջ, նահատակեալ կոյսերու վկայարաններուն մէջ, եւ հոգաց աղքատներու պէտքերը:

Տարին չանցած, Հայաստանի նոր մարզպան իմաստուն Անդեկան պարսիկին իսկ յանձնարարութեամբ Վաղարշ թագաւոր հրովարտակով Մամիկոնեան նախարարական տան տէր եւ Հայոց զօրավար Վահան Մամիկոնեանը նշանակեց մարզպան Հայաստանի:

Դեսպանին ձեռքէն մարզպանութեան պաշտօնի հրովարտակը ստանալուն առթիւ, Վահան Մամիկոնեանի առաջին գործը եղաւ Աստուծոյ տունը երթալ, չնորհակալութեան աղօթք մատուցանելու: Դէպի եկեղեցի գրոհ տուաւ ժողովուրդի երկսեռ բազմութիւնը: «Եկեղեցին բաւական չըլլալով ընդունելու բոլորը, լեցուեցան եկեղեցւոյ դուրսի սրահները, փողոցները եւ շուրջի հրապարակները»:

Երեւակայել միայն կարելի է թէ այդ ուրախ եւ աղմկալի բազմութեան մէջ քանիներու ականջին լսելի եղան սուրբ Յովհաննէս Մանդակունի կաթողիկոսին գոհաբանական ուղերձի բառերը:



ՎԱՐԴԱՆԱՆՑ VARTANANTZ




արտայոյտ.
քալ նա – հա – տակ որ վա – նե – ցեր ըզ – քըշ – նա – մին,
kach na - ha - dag vor va - ne - tzer uz - tush - na - min,
ցէք Հա - յաս – տան · եայց պայ - ծա – ռա - պէս զար - դա – րե – ցան
tzik Hai - as - bai - dza - ra - bes zar - ta - re - tzan
դանդաղելով.
վար – դա գոյն ար – եամ բրդ քով պը – սա – կե – ցեր զե – կե – ղե – ցի:
var - ta - kouyn ar - yam - pud kov bu - sa - ge - tzer ze - ge - ghe — tzi.
ու – նե – լով մի չտ բա – րե – խօս ըզ ճըգ նու թիւն մար տի րո – սաց:
oo - ne - lov mishd pa - re - khos uz - juk - noo - tune mar - di - ro - satz.
rall.
C
հանդիսաւոր.
սերտիւ
mf. Նո – րա – հրաշ պը – սա – կա – ւոր եւ զո –
No - ra - hrash bu - sa - ga - vor yev zo -
mf. պը – սա – կա – ւոր եւ զո –
bu - sa - ga - vor yev zo -
mf. պը – սա – կա – ւոր եւ զո –
bu - sa - ga - vor yev zo -
mf. պը – սա – կա – ւոր եւ զո –
bu - sa - ga - vor yev zo -
C
mf.


ra - klookh a - ra - kin - yatz, va - re - tzar zi - noo hok - vouyn
ra klookh a ra - kin - - yatz, va - - re - tzar zi noo hok - vouyn
ra - klookh a - ra - kin - yatz, va - re - tzar zi - noo hok - vouyn
ra - klookh a - ra - - kin - - yatz, va - re - tzar zi - noo hok - vouyn
դանդաղելով.
p.
D
Solo.
a - ri - a - par unt tem ma - hoo. Var - tan
a - ri - a - par unt - tem ma - hoo.
a ri - a - par unt - tem ma - hoo.
a - ri a - par unt - tem ma - hoo. Վարդան — Վար -
D


կեղուն.
քաջ նա – հա – տակ որ վա – նե – ցեր ըզ – թըչ – նա – մին,
kach na - ha - dag vor va - ne - tzer uz - tush - na - min,
կեղուն.
քաջ նա – հա – տակ որ վա – նե – ցեր ըզ – թըչ – նա – մին,
kach na - ha - dag vor va - ne - tzer uz - tush - na - min,
դան
f. վա – նե – ցեր ըզ – թըչ – նա – մին,
va - ne - tzer uz - tush - na - min,
դանդաղելով.
վար – դա – գոյն ար – եամ – բըդ քով պը – սա – կե – ցեր զե – կե – ղե – ցի:
var - ta - kouyn ar - yam - pud kov bu - sa - ge - tzer ze - ge - ghe - tzi.
դանդաղելով.
վար – դա – գոյն ար – եամ – բըդ քով պը – սա – կե – ցեր զե – կե – ղե – ցի:
var - ta - kouyn ar - yam - pud kov bu - sa - ge - tzer ze - ge - ghe tzi.
դանդաղելով.
վար – դա – գոյն ար – եամ բըդ քով պը – սա – կե – ցեր զե – կե – ղե – ցի:
var - ta - kouyn ar - yam - pud kov bu - sa - ge - tzer ze - ge - ghe tzi.
դանդաղելով.
վար – դա – գոյն ար – եամ բըդ քով պը – սա – կե – ցեր զե – կե – ղե – ցի:
var - ta - kouyn ar - yam - pud kov bu - sa - ge - tzer ze - ge - ghe tzi.
դանդ.

ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆԻՆ

Խօսք՝ ՍՈՒՐԷՆ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ Երաժշտութիւն՝ ԳԵՂՈՒՆԻ ԶՊԶԵԱՆԻ

(Խառն քառաձայն, կամ մանկական երգչախումբի համար՝ դաշնամուրի նուագակցութեամբ)





*) Երգը կարելի է կատարել նաև միաձայն (I ձայնը)


mp
mp
mp
cresc.
Maestoso
mf
Maestoso
mf
f
f
mf
poco allarg
f


փա՜ռք.
- դար:
փա՜ռք քեզ. փա՜ռք. փա՜ռք քո սր - ին ար - դար. փա՜ռք քո սր - ին:
փա՜ռք.
փա՜ռք. քո սր - ին ար - դար:
փա՜ռք քեզ. փա՜ռք. փա՜ռք քո սր - ին ար - դար. փա՜ռք քո սր - ին:
ff
փա՜ռք.
փա՜ռք քեզ Ան - դրա - նիկ. փա՜ռք քեզ. փա՜ռք. ա - շուռ - նըդ կ'ապ - րի դա - րե -
փա՜ռք քեզ Ան - դրա - նիկ. փա՜ռք. ա - շուռ - նըդ կ'ապ - րի դա - րե -
փա՜ռք քեզ Ան - դրա - նիկ. փա՜ռք քեզ. փա՜ռք. ա - շուռ - նըդ կ'ապ - րի դա - րե -


մեծ
փառք
-դար:
փառք քեզ, Ան - դրա - նիկ, փառք քեզ, փառք.
-դար:
Տաճ.
փա՛ռք.
. -դար քո ա - նուշ-նր կիսպ- րիս: փառք քեզ. Ան - դրա - նիկ, փա՛ռք քեզ փառք.
8
Sub.p
f
փա՛ռք քո սր - բին ար - դար:
Փա՛ռք քեզ. Ան - դրա - նիկ.
փա՛ռք քո սր - բին պր - դար:
Փա՛ռք քեզ. Ան - դրա - նիկ.
f
փա՛ռք քո սր - բին ար - դար: փառք սր - բին ար - դար: Փա՛ռք քեզ. Ան - դրա - նիկ.
f


փոքր քէզ. փոքր. ա - նու - նըդ կապ - րի դա - րե - դար:
փոքր քէզ. փոքր. ա - նու - նըդ կապ - րի դա - րե - դար:
Poco più mosso
mf Ջուրն է Սաս - նայ Դաւ - թի քո մէջ. դու Վար - դա - նի պէս քա - ջա -
Poco più mosso
mf Ջուրն է Սաս - նայ Դաւ - թի քո մէջ. դու Վար - դա - նի պէս քա - ջա -
mf


-վում,
Սուրբ հա-ւա-տով ա-պա-տա-նէնք
-վում,
Սուրբ հա-ւա-տով ա-պա-տա-նէնք
f
աշխ-տանք եւ գոր-ծել դու բա-կում:
f
աշխ-տանք եւ գոր-ծել դու բա-կում:
f


Maestoso
Maestoso



Più mosso
Più mosso
f


դար-ձել ես լե-գենդ դու ան-մար.
-մար.
դար-ձել ես լե-գենդ դու ան-մար. լե գենդ:
Հա - յոց հո - ղում Բար-ձրա - գա - գաթ
Հա - յոց հո - ղում Բար-ձրա - գա - գաթ


Maestoso
ff
Փառք
քեզ, Ան-դրա-նիկ.
փառք.
փառք քեզ. փառք,
Maestoso
ff Փառք
քեզ. Ան-դրա-նիկ.
փառք.
փառք քեզ. փառք.
ff



փա՛ռք քո աչ-քին ար-դար: Փա՛ռք քո աչ-քին. փա՛ռք քեզ. Ան-դրա-նիկ.
փա՛ռք քո աչ-քին ար-դար: փա՛ռք քո աչ-քին. փառք քեզ. Ան-դրա-նիկ.
փա՛ռք.
փա՛ռք քեզ, փա՛ռք. ա-նու-նըդ կա-րի դա-րե-
փա՛ռք.
ա-նու-նըդ կա-րի դա-րե-
փա՛ռք քեզ, փա՛ռք.


-դար:
fff փառք քեզ, Ան - դրա - դիկ,
-դար:
-դար: քո ա - ռա - ջը կ'ապ - րի:
fff փառք քեզ, Ան - դրա - դիկ,
cresc.
ff
փառք.
փառք քեզ, փառք. փառք քո ար - ին ար - դար:
փառք.
փառք քո ար - ին ար - դար:
փառք քեզ, փառք. փառք քո ար - ին ար - դար: Ար - ին ար - դար փառք,


փառք քեզ. Ան-դրա-նիկ. փառք քեզ. փառք. ա-նու-նըդ կապ-րի
դա - րէ - դար:
ff
sff
sf sf sf sf sf

ՀԱՅ ԴԻՒՅԱԶՆԻՆ

Դու հանգչում ես հողում օտար,
Հայրենիքից հեռո՛ւ, հեռո՛ւ,
Բայց անունը քո լեգենդար
Ապրում է միշտ մեր սրտերում:

Կրկներգ՝

Փա՛ռք քեզ, Անդրանի՛կ, փա՛ռք,
Փա՛ռք քո սրին արդար,
Փա՛ռք քեզ, Անդրանի՛կ, փա՛ռք,
Անունդ կ'ապրի դարեդար:

Հուրն է Սասնայ Դաւթի քո մէջ,
Դու՝ Վարդանի պէս քաջազուն,
Սուրբ հաւատով ազատատե՛նչ
Սխրանք ես գործել դու բազում:

Կրկներգ՝...

Դու հայ մարդու հզօր պաշտպան,
Դարձել ես լեգենդ դու անմար:
Հայոց հողում բարձրագագաթ
Ճախրում է ոգին քո արդար:

Կրկներգ՝...

ՍՈՒՐԷՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ